

Կիրանցի բնակիչները մեզ պատմեցին, որ իրենց անվտանգ չեն զգում, քանի որ տեսնում են, որ ժամանակ առ ժամանակ ադրբեջանական զինյալների 4-5 հոգանոց խմբեր, ինքնաձիգներով զինված, մոտենում են այդ պատին: Իսկ ամռանը ադրբեջանցի քաղաքացիական անձանց խմբեր էլ են եկել այդտեղ, նկարվել Կիրանցի կամրջի վրա, հեռացել:

Կարդացեք՝ էջ 4



Մի կողմից, Թբիլիսին Թրիփը դիտարկում է որպես Բաքվի եւ Երեւանի համար փակուղուց դուրս գալու եւ տարածաշրջանը տնտեսապես ռացիոնալացնելու գործիք, իսկ Անկարան այն դիտարկում է որպես իր դերի ամրապնդման տարր: Մյուս կողմից, Վրաստանը գիտակցում է, որ Ռուսաստանի մոտեցումը TRIPP-ին պրագմատիկ եւ իրավիճակային է:

Կարդացեք՝ էջ 6



Այս խելագարության մեջ Հայաստանը մինչեւ վերջ չիստակեցված նպատակներով փորձում է հայտնվել Թրամփի գրկում՝ դառնալ Խաղաղության խորհրդի անդամ, փաստացի հրաժարվել եվրոպական արժեքներից, որը, որքան էլ թերի ու երկիմաստ, կառուցված է իրավունքի, կայուն զարգացող ժողովրդավարական սկզբունքների ու մտածողության վրա:

Կարդացեք՝ էջ 8


Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am
ISSN 1829-2372
9 771829 237007 26009

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 9 (4124), 31 հունվար, շաբաթ, 2026


# Հրապարակ

www.hraparak.am



Լեգենդար հայ ֆուտբոլիստ, «Արարատ 73»-ի մարզիչ, ԽՍՀՄ բազմակի չեմպիոն ու գավաթակիր, օլիմպիական չեմպիոն Նիկիտա Սիմոնյանի անունով Երեւանում փողոց անվանակոչելու հարցը քննարկվել է քաղաքապետարանում, սակայն Ֆուտբոլի ֆեդերացիան դեմ է արտահայտվել դրան: Այս մասին իր հարցազրույցներից մեկում հայտարարել է «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի նախկին սեփականատեր Արթուր Սողոմոնյանը: Այս լուրը խիստ բացասական արձագանք է ստացել ոչ միայն հայկական ֆուտբոլում, այլեւ՝ դրսում, քանի որ Սիմոնյանը համաշխարհային սպորտում բացառիկ հարգանք վայելող մարդ էր, որի հետ կապի մեջ էին համաշխարհային ֆուտբոլային աստղեր, ՈւԵՖԱ-ի ու ՖԻՖԱ-ի ղեկավարները: Կարծես թե Արթուր Ջանիբեկյանի եւ Արթուր Սողոմոնյանի ֆինանսավորմամբ նկարահանված՝ «Արարատ 73»-ի մասին պատմող «Ոսկե դուբլ» ֆիլմն ազդել է իշխանամերձ որոշ շրջանակների նյարդերի վրա, ու դրանում նրանք տեսել են «փափուկ ուժի» դրսեւորում: Մարդիկ սկսել են պայքարել մեր երբեմնի բոլոր հաղթանակների ու հպարտության պահերի դեմ, փոխանակ հպարտանան դրանցով: Չնայած նույն Արթուր Սողոմոնյանն ամեն պատեհ առիթով հայտարարում է, որ հեռու է քաղաքական պրոցեսներից, եւ իր բարեգործական ծրագրերի նպատակը բացառապես հայկականի տարածումն է, սակայն ոմանք ժամանակ առ ժամանակ նրա անունը փորձում են կապել քաղաքականության հետ:



Հռիփսիմե Հունանյանի լիազորությունները ԱԺ առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից թեպետ պաշտոնապես դադարեցվել են, սակայն ՔՊ-ում չունեն հանձնաժողովի նախագահի նոր թեկնածու: Փնտրտուքի մեջ են՝ ում առաջադրել, որ ճիշտ ընկալվի: Բանն այն է, որ տեղապահ էլ չեն կարող նշանակել, քանի որ հանձնաժողովը չունի նախագահի տեղակալ, որը, ըստ ԱԺ կանոնակարգի, մի քանի ամիս կկատարեր նախագահի լիազորությունները. հանձնաժողովի նախագահի նախկին տեղակալ Լուսինե Բադալյանը նախագահ Նարեկ Զեյնալյանի հեռանալուց հետո հրաժարվեց պաշտոնից: Հիմա չնայած Զեյնալյանը նոր պաշտոնի՝ ԲԿ տնօրեն է նշանակվել, Բադալյանի նեղվածությունն էլ հարազատ թիմից անցել է, բայց ներսում կարծում են, որ նրա թեկնածությունն այնքան էլ ճիշտ չի ընկալվի, քանի որ ամիսներ առաջ տեղակալի կարգավիճակից է նույնիսկ հրաժարվել: Հանձնաժողովում այլ հարմար թեկնածու չկա: Հիշեցնենք, որ Հռիփսիմե Հունանյանին ընտրելիս թիմն ընտրություն էր կատարել նրա եւ Զարուհի Բաթոյանի միջեւ, վերջինիս օգտին ընդամենը 8 կողմ էր եղել, այսինքն՝ նրա թեկնածությանն էլ չեն կարող վերադառնալ:

## Քայլ 1, քայլ 2

Սկզբում դատավորներին անվանում ես վնգստացող, ԲԴԽ-ի միջոցով բոլոր քիչ թե շատ անկախ դատավորներին ազատում պաշտոններից, դատավոր դարձնում ջահել, անփորձ, դատավորի առաքելության մասին հեռավոր պատկերացում անգամ չունեցող մարդկանց, ապա հանձնարարում ես Քննչականին քեզ քննադատող, քո հեռացումը երազող ցանկացած մեկի նկատմամբ քրգործ հարուցել եւ կալանքի միջնորդություն տանել դատարան: Եվ քո նշանակած կամակատար դատավորներն անմռունչ կալանքի սանկցիաներ են տալիս, ՔՊ-ականների բոլոր հայցերն են բավարարում՝ ընդդիմության ու լրատվամիջոցների դեմ: Իսկ հետո դու հայտարարում ես՝ դատարանի որոշմամբ դուք մեզ զրպարտել եք, դուք հեղաշրջում եք կազմակերպել, բռնության կոչեր եք արել: Սկզբում ամեն փողոց դուրս եկողի, ամեն հանրահավաքի մասնակցի հանձնարարում ես բռնել. ասֆալտին փռելով ու բռնություն կիրառելով՝ բերման ենթարկել ոստիկանություն, ապա Քննչականիդ հանձնարարում ես քրեական գործեր հարուցել, կալանքի միջնորդություններ տանել, քո նշանակած դատավորների որոշումներով նրանց ամիսներով պահում ես կալանավայրերում: Հետո հայտարարում ես՝ ով համաձայն չէ իմ վարած քաղաքականության հետ, Արցախի հարցի փակման հետ, կոչ եմ անում՝ հեղափոխություն անել: Սկզբում ասում ես՝ մենք կլուծենք Գյումրիի քաղաքապետի հարցը, նման մարդը չի կարող քաղաքապետ աշխատել: Իսկ շաբաթներ անց «պարզվում է»՝ քաղաքապետը կաշառք է վերցրել, եւ նա հայտնվում է բանտում: Սկզբում ասում ես. «Ստահակ, հիմա քեզ «մեր ձեւով» ցույց կտամ», եւ ԱԱԾ-ն գնում է Սամվել Կարապետյանի հետեւից: Սկզբում Արշակ սրբազանին անվանում ես «պոռնկաբարո», գրում՝ «նա պետք է կարգալույծ արվի», ապա Քննչականը 7 տարվա վաղեմության պլան է հայտնաբերում ինչ-որ մեկի ուսապարկում եւ Արշակ սրբազանին կալանավորում:



*Մի քանի օր առաջ գրել էինք, որ Նիկոլ Փաշինյանը որոշել է ամեն ինչ անել՝ խափանելու Եպիսկոպոսաց ժողովը, որը կայանալու է փետրվարին՝ Ավստրիայում: Նախօրեին Վեհափառի դեմ քրեական վարույթ սկսեցին՝ ծառայողական լիազորություններն օգտագործելով՝ դատական ակտը չկատարելու մեղադրանքով: Գործը հորինվել է Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ Գեւորգ եպիսկոպոսի ազատման փաստով: Չնայած փաստաբանները պնդում են, որ թեմի առաջնորդը ոչ թե աշխատանքային պայմանագրով, այլ ուխտով է կապված կաթողիկոսի հետ, եւ այստեղ դատական ատյաններն ու Աշխատանքային օրենսգիրքը կապ չունեն, սակայն իշխանությունների համար դա էական չէ: Դատական որոշում կա՝ կաթողիկոսին պարտադրող, որ վերականգնի Գեւորգ Սարոյանին թեմի առաջնորդի պաշտոնում: Այդ որոշումը նա չի կատարել, ուստի հարուցվել է նման վարույթ: Իշխանական կուլիսներում խոսում են, որ այս վարույթով հիմք են նախապատրաստում, որ Վեհափառի ՍԷԿՏ-ը փակեն եւ թույլ չտան լքել Հայաստանի տարածքը, ինչպես արել են բոլոր ընդդիմադիրների եւ շատ ուրիշների նկատմամբ: Դրանով կտապալեն Եպիսկոպոսաց ժողովը, որի օրակարգում լինելու է տիրադավ եպիսկոպոսներին թեմական առաջնորդությունից զրկելու հարցը:*

## ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ ԿՏՐՎՈՒՄ ԵՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հունվարի 29-ին Բարձրագույն դատական խորհրդում հերթական անգամ չեն կարողացել Հակակոռուպցիոն դատարանի համար դատավոր ընտրել, այս անգամ՝ քաղաքացիական դատարանի: Հիշեցնենք. նախորդ անգամ էլ Հակակոռուպցիոն քրեական դատարանի դատավոր չէր ընտրվել՝ թեկնածուները չէին կարողացել քննության գրավոր փուլը հաղթահարել: ԲԴԽ-ից մեզ փոխանցեցին՝ 3 հավակնորդ է եղել, որոնցից որեւէ մեկը չի ստացել անհրաժեշտ քանակի ձայն: Մեր տեղեկություններով՝ դատավոր դառնալու համար պայքարել են փաստաբաններ Կարեն Ստեփանյանը, Միհեր Հայրապետյանը եւ դատախազ Տաթեւիկ Խաչատրյանը: Նշենք, որ գրեթե ամեն անգամ դատավորի պաշտոնի համար մրցույթին դատախազներ են մասնակցում, բայց վերջին շրջանում նրանց հիմնականում չի հաջողվում հաղթահարել անցողիկ շեմը:

# ՔՈՉԱՐՅԱՆԸ ԹՈՂ ՂԱՐԱԲԱՂԻՆ ՏԵՐ ԿԱՆԳՆԵՐ, ՈՉ ԹԵ ՀԱՆՁՆԵՐ

ՔՊ



Զրուցել ենք «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, պաշտպանության նախկին փոխնախարար, ԱԺ պաշտպանության հանձնաժողովի անդամ **Գագիկ Մելքոնյանի** հետ:

**- Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկվա ասուլիսում հայտարարեց, որ TRIPP-ը մեր երկրի համար ամենամեծ անվտանգային սպառնալիքն է դառնալու, TRIPP-ը հայ-ամերիկյան պրոյեկտ է՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի համար: Հայաստանը կողմ չէ, կիսակողմ է, եւ որ ԱՄՆ-ն այս ծրագրում 0 տնտեսական շահ ունի, մենք՝ նույնպես: ԱՄՆ-ին միակ հետաքրքրող հանգամանքն Իրանն է, որին ԱՄՆ-ն փորձում է վերցնել վերահսկողության տակ: Ըստ Քոչարյանի՝ շատ հավանական է նաեւ Իրանի նկատմամբ նոր ագրեսիայի, նոր ռազմական գործողությունների հեռանկարը:**

- Ոչ մի դեպքում համաձայն չեմ, որ Իրանի հետ կապված խնդիրներ են առաջանալու: ԱՄՆ-ն այստեղ օֆիսում է աշխատելու, սահմաններին ո՛չ զորք է բերելու, ո՛չ էլ կանգնելու են էդտեղ, մեր սահմանապահ զորքերն են կանգնելու, ու չեմ հասկանում՝ ինչ կապ ունի ԱՄՆ-ն:

**- 99 տարով վարձակալելու է տարածքը, իր ներկայությունն է ունենալու՝ եթե ոչ զորքի, այլ գուցե հատուկ ծառայության ներկայացուցիչների տեսքով, դրանից բխող բոլոր հետեւանքներով:**

- Չկա նման բան, այդ ամենը համատեղ է արվելու, որ ասում եք՝ շահ չկա տնտեսական, մենք ոչ մի կոպեկ ներդրում չենք անելու ու 26 տոկոս օգտվելու ենք, ու նաեւ՝ ինչ գործողություն լինելու է՝ մաքսավճար եւ այլն, մենք լրիվ ստանալու ենք:

**- Այդ դեպքում ինչպե՞ս կբացատրեք Իրանից հնչող մտահոգությունները, եթե ամեն ինչ այդքան պարզ է:**

- Իրանի հետ ոնց էր, որ նախագահը երեք ամիս առաջ եկավ ստեղ, ասաց՝ խնդիրներ չունենք, բայց հիմա, երբ Իրան-ԱՄՆ հարաբերությունները լարված են, տարբեր մարդիկ տարբեր մեկնաբանություններ են անում, թե վտանգ է ներկայացնում:

**- Հետո Իրանի նախագահի կողմից կոշտ հայտարարություն հնչեց...**

- Այո, որովհետեւ, ասում եմ, լարված է հիմա ԱՄՆ-ի հետ, էստեղ էլ քաղաքականություն է: Բայց ես ասեմ, որ մենք այստեղ շահում ենք հաստատ, ԱՄՆ-ն բերելու է՝ միլիարդավոր ներդրումներ անի, մենք 26 տոկոսը շահելու ենք, պլյուս մաքսատուրքերը: Հիմա Քաջարանի մոլիբդենայինն էլ տվել ենք ուրիշներին, ուրիշներն աշխատացնում են, մեզ տված տոկոսներով միլիարդավոր շահույթ ենք ստանում, նույնն էլ սա է: Ուղղակի Քոչարյանը Մարիա Զախարովայի տեղակալը ոնց որ լինի, որ իր հարցազրույցը նայում ես:

**- Ի՞նչ կապ ունի Մարիա Զախարովան, ինչի՞ց ելնելով եք նման բան ասում:**

- Ամեն ինչի, Ռուսաստանի համար գնանք, Ռուսաստանի ոտերը լվանք՝ ջուրը խմենք, էսենց բաներ էր ասում:

**- Ես ներկա էի ասուլիսին, նման բաներ չեմ լսել, որ ասի:**

- Իրա ասածներից էդպես ես պատկերացնում:

**- Իսկ որ իր թիկունքում Արարատի լեռան, Խոր վիրապի նկար էր փակցված, դրանից ի՞նչ պատկերացում կազմեցիք:**

- Ես չգիտեմ՝ ինչի համար էր էդ նկարը փակցրել, անկեղծ՝ չգիտեմ:

**- Ասաց, որ, ի տարբերություն ձեզ՝ իշխանավորներիդ, իրենք տեր են մեր ազգային արժեքներին, սիմվոլներին:**

- Քոչարյանը թող Ղարաբաղին տեր կանգներ, ոչ թե Ղարաբաղը հանձներ:

**- Քոչարյա՞նն է հանձնել Ղարաբաղը, էդ ժամանակ Դուք էլ էիք պաշտոնյա...**

- Դուք չգիտե՞ք, որ Ղարաբաղը շատ շուտվանից էինք հանձնել, խաբար չկար վրեքներս: Վարչապետի ու իրանց տարբերությունն այն է, որ վարչապետն ասում է այն, ինչ կա, իսկ իրանք խաբել են, խաբել են բոլորիս:

**- Ձեր վարչապետը չէ՞ր ասում, որ Արցախը Հայաստան է, խաբո՞ւմ էր: Գիտեր, որ Քոչարյանը հանձնել է Ղարաբաղը, բայց նման բան էր ասում:**

- Հա, ասել ա, պահի տակ ասել ա, բայց էն, որ իրանք ամբողջ ժողովրդին խաբել են, խաբել են ու խաբել, 26 տարի խաբել են: Մեկը իրանցից տղամարդ չի եղել, որ հելնի կանգնի ասի. ժողովուրդ ջան, էս ա մեր վիճակը, ոչ ոք չի ասել, իսկ հիմի ընտրություններ են, ամեն մեկն ուզում է դիվիդենտ շահի, ամեն մեկն իրեն վարչապետ է զգում: Ասում է՝ երկիրը կհանի էս վիճակից, տասը տարի ղեկավարել էր, թող հաներ:

**- Ինչի՞ց հաներ, Արցա՞խն էր հանձնված, թե՞...**

- Թող լուծեին Ղարաբաղի հարցը:

**- Նոր ասում էիք՝ ինքն է հանձնել, հիմա ասում եք՝ լուծեր: Բայց չէ՞ որ բանակցություններ էին գնում:**

- Սերժ Սարգսյանն ասեց՝ ձեւ չկա, բանակցությունները ձախողվել են, գնացեք «Ստեփանակերտ-Ստեփանակերտ» երգել սովորեք:

**- Փաշինյանն էլ իր զրոյական կետից էր սկսել:**

- Այո, էդ կետը բերեց նրան, որ ԱՄՆ-ն էսօր Հայաստանում ա:

**- Հայ ժողովուրդը սա էր երազո՞ւմ, երեւի, ու կարծում եք, որ այս ընտրություններին կրկի՞ն վստահության քվե եք ստանալու:**

- Ժողովուրդն ամեն ինչ տեսնում է, էն գյուղի ժողովուրդը տեսնում է, որ իր գյուղի մեջը ասֆալտ է սարքվել, որ իրանց մանկապարտեզը եվրոմակարդակի վերանորոգվել է, որ գյուղում դպրոց չի եղել, պատուհանները ցելաֆոն են եղել, բայց հիմա դպրոցներ են սարքել:

**- Ձեր միլիոնավոր պարգեւավճարներն էլ է տեսնում, սուտ խոստումները՝ թոշակները բարձրացնելու մասին:**

- Պարգեւավճարը ոչ թե պատգամավորներին, նախարարներին են տվել, այլ ամբողջ համակարգին՝ հավաքարարներից սկսած, կոմպյուտրի մոտ նստող աղջիկներով վերջացած:

**- Այսինքն՝ դուք ծաղկեցրել, շենացրել եք երկիրը, եւ ամեն ինչ լավ է:**

- Ամենակարեւորը՝ կա խաղաղություն, իսկ մենք էլ պատրաստվում ենք մեր երկրի զարգացմանը:



Լուսինե
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@
hraparak.am

# ԻՆՉՈՒ ԵՆ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ ՍԹՐԵՍ ԱՊՐՈՒՄ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻՑ




8-9 մլրդ դրամը, որ բաժանվեց ՔՊ-ականներին հանրային գրպանից, պաշտոնյաների աշխատավարձի բարձրացման մասին խոսակցությունները հանրային սթրես են առաջացնում: Ինչո՞ւ, ո՞ր արժանիքների համար պետք է բարձրաստիճան պաշտոնյաները պարգեւատրվեն աստղաբաշխական գումարներով՝ հարցնում են մարդիկ: Իսկ թվերն իրոք մեծ են: ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը, օրինակ, հաշվարկել է, որ 8-9 տարում Նիկոլ Փաշինյանի կառավարությունը 500 մլրդ դրամի պարգեւատրումներ է բաժանել յուրայիններին, ինչը կազմում է 1 մլրդ 200 հազար ԱՄՆ դոլար:

ՔՊ-ական վերնախավի ներկայացուցիչները լավ գիտակցում են, որ պարգեւատրումները, առավել եւս՝ հավելյալ աշխատավարձի համակարգի ներդրումը, որն անցյալ տարվանից իրականացվում է պիլոտային ծրագրի տեսքով, խիզախ քայլ էր եւ ժողովրդի զայրույթն է առաջացնելու: «Ուղղակի բարձրացնել նախարարների, փոխնախարարների եւ ղեկավարների աշխատավարձը՝ երեւի այնքան էլ ճիշտ չի, եւ պետք է ներդնել մի համակարգ, որտեղ առնվազն կկարողանանք որոշակի թիրախներ դնել... Ովքեր ունենան ավելի լավ կատարողական, նրանց համար մի փոքր ավելի կլինի, մյուսների համար՝ մի փոքր պակաս»,- հայտարարում է ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը՝ փորձելով մեղմ մատուցել կատարվածը: Բայց, միեւնույն է, ինչպիսին էլ լինի մատուցումը կամ այդ տեղեկատվության փաթեթավորումը, մարդիկ նյարդայնացած են. աղքատ երկրում, որտեղ թոշակառուն 40-50 հազար է ստանում, չպետք է պաշտոնյան այդքան մեծ գումարներ ստանա:

Օրինակ, քաղաքացիների մոտ հարց է առաջանում՝ ո՞նց կարող են ՊԵԿ-ը, ոստիկանությունը եւ առողջապահության նախարարությունը նույն գումարը ստանալ որպես պարգեւավճար: «Լավ էր-վատ էր, բայց ՊԵԿ-ն այս ծանր պայմաններում իր խնդիրը կատարեց, հարկերը հավաքեց, իսկ ոստիկանությունն իր խնդիրները չի կատարում: Ամեն քայլափոխի մարդ է մահանում, ոչ մի կանխարգելիչ միջոցառումներ չկան, հանցագործությունների թիվն աճում է»,- ասում է ֆինանսների նախկին նախարար, հանրային ֆինանսների կառավարման միջազգային խորհրդատու **Վարդան Արամյանը**: Նա այլ համակարգերի մասին էլ է հիշեցնում, օրինակ, որ սուր վարակիչ հիվանդությունների քանակը 2025 թվականին ավելի շատ է եղել, քան 2024 թվականին, այսինքն՝ կանխարգելիչ միջոցառումներ չեն արվել: «Այստեղ խախտվում է հորիզոնական արդարության սկզբունքը: Լավ կատարողական ունեցող եւ աշխատանքը ձախողած գերատեսչությունները նույն ձեւով են պարգեւատրվում»,- ասում է ֆինանսների նախկին նախարարը:

Ըստ նրա՝ բնական է ու արդար, որ նախարարն ու փոխնախարարն ավելի շատ են պարգեւատրվում, քան առաջին կարգի մասնագետը, քանի որ ե՛ւ գիտելիքի, ե՛ւ հմտության, ե՛ւ պատասխանատվության տարբեր մակարդակների հետ գործ ունենք: «Որ ոչ մեկին չնեղացնեմ, ինձ վրա օրինակ բերեմ. մարդկանց մեծամասնությունը 6-ից հետո հանգստանում է, իսկ ես մինչեւ գիշերվա 12-ը, 1-ը ինձ վրա աշխատում եմ, իմ կվալիֆիկացիան եմ բարձրացնում, շաբաթ-կիրակի չունեմ: Տրամաբանական չէ՞, որ իմ գինը շուկայում ավելի բարձր պետք է լինի, քան այն մարդունը, որը 6-ին գնացել է տուն»,- ասում է Վարդան Արամյանը: Ըստ նրա, հոգեբանական եւ հոգեբարոյական խնդիր է առաջանում, «երբ որ մարդը հարկ է տալիս, հետո տեսնում է, որ բարձրաստիճան պաշտոնյա կոչվող երկրի նախագահն ինչքան ուժ ունի՝ շնորհակալություն է հայտնում Ալիեւին»: Եթե այդ բարձր պաշտոններում նստած լինեն մարդիկ, որոնք ոչ թե նախարար են դարձել, որովհետեւ 2018 թվականից հետո նրանց բախտը բացվել է՝ ՔՊ-ի հաշվին, այլ իրենք իրենցով շուկայում իրոք գին ունենան, ըստ Արամյանի, նման ցասում հարկատուների մոտ չէր առաջանա: Փորձագետն օրինակ է բերում վարչապետ Կարեն Կարապետյանի կառավարության անդամներին, որոնք հիմնականում պահանջված մասնագետներ էին, եւ հեռանալուց նրանք նույնիսկ երջանիկ էին, որ դուրս են գալիս, որովհետեւ բոլորն էլ շահավետ առաջարկներ ունեին եւ գնալու էին զբաղվելու իրենց սիրելի գործով ու բարձր վարձատրությամբ: «Ես, օրինակ, շատ թեթեւ էի այդ ամենը տանում, որովհետեւ գիտեի, որ եթե վաղը չէ մյուս օրը դուրս գամ, ունեմ լավ առաջարկներ, իմ գիտելիքը թույլ էր տալիս»,- ասում է փորձագետը:

Սյուզան
ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan
@hraparak.am

# ՀԱՑ ԵՎ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ. ՀԱՑԸ ՅՈՐԵՆՆ Է, ՈՐ ԲԵՐՈՒՄ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՎ, ՏԵՍԱՐԱՆՆ ԷԼ՝ ԹՄԲՈՒԿԸ

*«Հրապարակի» զրուցակիցը ՀՀԿ ԳՄ անդամ **Էդուարդ Շարմազանովն** է:*



**- Իշխանությունները Հայ առաքելական եկեղեցու դեմ ագրեսիվ արշավը չեն դադարեցնում: Ամեն կիրակի շրջիկ կրկես հիշեցնող նույն պատարագներն են, նույն չարախոսությունները Վեհափառի հասցեին, արդեն բանը հասել է նրան, որ Փաշինյանի կամակատար դատական համակարգը որոշել է խառնվել Եկեղեցու ներքին կանոնակարգերին եւ ինքն է որոշում, թե որ թեմում ով պետք է առաջնորդ նշանակվի: Այս պրոցեսներին ի՞նչ գնահատական կտաք:**

- Ես իմ կարծիքն այս մասին ասել եմ դեռ 2018-ին, երբ «Նոր Հայաստան՝ նոր հայրապետ» շարժումը ստեղծվեց, երբ Վեհափառի դեմ գործողություններ էին իրականացվում Վայոց Ձորում, երբ այս թիմի վառ ներկայացուցիչները նրան ավազանի անունով էին դիմում: 2018-ին ես օրենսդրական նախաձեռնությամբ եմ հանդես եկել ԱԺ-ում՝ հենց այս թեմայով, որին 28 անձ է կողմ քվեարկել ընդամենը: Նախաձեռնության նպատակը Վեհափառի եւ Եկեղեցու պաշտպանությունն էր, եւ դեռ այն ժամանակ ես ասել եմ՝ այսօր 28 հոգի է պաշտպանում Վեհափառին, վաղը 2 հազար 800 հոգի է պաշտպանելու, հետո՝ 2 միլիոնից ավելի.... Նիկոլ Փաշինյանը զբաղված է հակասահմանադրական, հակազգային գործողություններով, նա ունի նպատակ՝ մեր Եկեղեցին պառակտելու, Եկեղեցու հեղինակությունը ոչնչացնելու, քանի որ Եկեղեցին է մնացել միակ ազգային ինստիտուտը, որը խոսում է եւ պայքարում է ազգային արժեքների համար, Արցախ վերադարձի համար է պայքարում եւ ցեղասպանությունը չուրանալու: Ակնհայտ է, որ Նիկոլ Փաշինյան քանդողին, որը քանդում է երրորդ հանրապետության հիմքերը, Եկեղեցին հակակշիռ է: Ըստ Սահմանադրության, Եկեղեցին ունի բացառիկության իրավունք, ազգային առաքելություն, այս մարդու նպատակը քանդելն է, պառակտելը, ամենաթողություն ստեղծելը: Այս ամենում կա թե՛ ներքին, թե՛ արտաքին պատվեր: Սա նեոբոլշեւիկյան կառավարություն է, որը եկել է ամեն ինչ քանդելու: Նիկոլը որոշ իմաստով արդեն իսկ հասել է իր նպատակին, Արեւմուտքը ծափահարում է նրան, իսկ կողքից ոչ ոք ոչինչ չի անում, դե, սրանք էլ բոլոր գրված ու չգրված օրենքներով Եկեղեցու դեմ են պայքարում: Անհնար կլիներ Եկեղեցու դեմ պայքարը, եթե Եկեղեցու ներսում չլինեին մարդիկ, ովքեր տրոյական ձիու գործառույթ կստանձնեին: Դժբախտաբար, նմանները գտնվեցին:

**- Ընտրություններին մնաց հազիվ 5 ամիս: Գրեթե բոլոր ուժերն ակտիվացել են, հինգշաբթի օրը Ռոբերտ Քոչարյանը մամուլի ասուլիսով հանդես եկավ: Ի՞նչ եք կարծում՝ հնարավոր կլինի՞ ինչ-որ փոփոխության հասնել ընտրությունների արդյունքում:**

- Իսկ ո՞րն է ընտրությունների այլընտրանքը, ոչինչ չանե՞լը: Իհարկե, պետք է օրենքի սահմաններում անել ամեն ինչ, որպեսզի հնարավոր լինի իշխանությանը հեռացնել: Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, բառի ամենաուղիղ իմաստով, մեռած է՝ թաղած չէ: Փաստացի, Հայաստանը գոյություն ունի, բայց ոչնչացված են բոլոր գաղափարական հիմքերը, ի՞նչ անեն մարդիկ, չպայքարե՞ն: Այո, բարդ է լինելու, սակայն պայքարի շատ ձեւեր չկան, իսկ ընտրությունները դրանցից մեկն են:

**- Բայց շատերը՝ հենց Ձեր քաղաքական թիմը, բացառապես իմպիչմենտ են ցանկանում, ընտրությունների մասին լսել չեն ցանկանում:**

- Լավ են անում, որ իմպիչմենտ են ուզում, բայց իմպիչմենտն ընտրություններին չի խանգարում, ոչ էլ ընտրություններն են իմպիչմենտին խանգարում: Իմպիչմենտի մասին բազմիցս խոսել ենք: Թե՛ իմպիչմենտի, թե՛ ընտրությունների նպատակը մեկն է՝ իշխանափոխություն, իսկ ՀՀԿ-ն միշտ կողմ է այդ երկու տարբերակին: Մեր ասածն ուղղակի այլ էր: Մենք ասում էինք՝ քանի որ ընտրություններին դեռ մեկ տարի կա, իսկ մեկ տարին բավականին երկար ժամանակ է, եկեք կենտրոնանանք իմպիչմենտի վրա, մենք չենք ասել, որ ընտրությունները հակասում են իմպիչմենտին: Երկուսն էլ սահմանադրական միջոցներ են՝ իշխանափոխության հասնելու: Իշխանափոխության հասնելու 3 հնարավորություն կա. իմպիչմենտ, ընտրություններ, կամավոր հրաժարական: Հրաժարականին չեմ հավատում, մյուս երկուսն էլ սահմանադրական միջոցներ են եւ պետք է կիրառվեն: Ես այն մարդկանցից չեմ, որ ասում են՝ ընտրություններով ոչինչ հնարավոր չէ: Եթե նստես թախտին ու ոչինչ չանես, վերջում պետք է ասես՝ տարբերակ չկա, բայց իրականում ամեն ինչ էլ հնարավոր է՝ ճիշտ, խելամիտ աշխատանքի շնորհիվ: Պետք է ճիշտ դաշինքներ կազմել, ճիշտ ճանապարհներ ընտրել: Մարդիկ կան, որ նստած չարախոսում են ամբողջ օրը, ինչ է թե իրենք չկան ընտրություններին, ասում են՝ ընտրություններն արդյունավետ տարբերակ չեն: Լավ, էլի, տղերք, թարգեք:

**- Դուք ասում եք. «Հայաստանը մեռած է՝ թաղած չէ», իսկ իշխանությունները հպարտորեն ասում են, որ երբեք այսքան լավ չի եղել Հայաստանի վիճակը՝ թշնամիների հետ հարաբերությունները կարգավորել են, Ադրբեջանի տարածքով ցորեն, բենզին են բերում, անգամ Ալիեւին շնորհակալություն են հայտնում:**

- Հայաստանի Երրորդ Հանրապետության հիմքերը՝ Արցախը, իրավական պետությունը, ժողովրդավարությունը, գոյություն չունեն: Ինչ ուզում՝ անում են, ում վրա ինչ գործ ուզում՝ սարքում են, հիմա էլ հերթը Եկեղեցունն է, անտեսելով բոլոր օրենքները՝ միջամտում են Եկեղեցու գործերին: Ի՞նչ գործ ունի գործադիրը Եկեղեցու հարցերի հետ: Կամ՝ դատարանի ի՞նչ գործն է, թե Մասյացոտնի թեմի առաջնորդն ով է՝ կարգալո՞ւյծ է, թե՞ ոչ: Օրինակ, դատարանը կարո՞ղ է որոշել՝ Շարմազանով Էդուարդը ԳՄ անդա՞մ է, թե՞ ոչ: Դա իմ կուսակցության որոշումն է, չէ՞: Սահմանադրության մեջ հստակ գրված է, որ Եկեղեցին անջատ է պետությունից: Ինչ վերաբերում է բենզինին, ցորենին, էդ ամենը խայտառակություն է: Վահագն Խաչատուրյանն ինչո՞ւ էր գնացել Ալիեւին շնորհակալություն հայտնելու, հազարավոր տղաներին սպանելո՞ւ, Հայաստանի 240 կիլոմետրն օկուպացնելու, թե՞ արցախցիներին էթնիկ զտման ենթարկելու եւ Արցախը հայաթափելու համար: Էլ չենք խոսում Հայաստանից նորանոր պահանջների մասին: Մեր ժողովուրդը պետք է կողմնորոշվի, թե սրանք ովքեր են: Մեծ-մեծ խոսում են, ասում են՝ բոլորն էլ մեր երեխաներն են, բա, Աստված մի արասցե, որ մեկը ձեր երեխաներին սպանի, կգնաք կասեք մե՞րսի.... Հրանտ Մաթեւոսյանն ասել է՝ մարդու եւ անասունի արանքում հիշողությունն է ընկած, բայց ես չեմ զարմանում, քանի որ, ինչպես Նժդեհն է ասել՝ մի զարմացիր, քանի որ անձի դեմ ապերախտողը շուն չէ, այլ՝ մարդ: Լավ, ո՞նց կարելի է էսպես ուրանալ սեփական ժողովրդին, սեփական հայրենիքն ու Եռաբլուրը: Ինչի՞ համար եք շնորհակալ, արա:

**- Փաշինյանը բենդ է ստեղծել, նվագում է, Անահիտ Ավանեսյանն էլ պարում է: Հետեւո՞ւմ եք այդ ամենին:**

- Ստիպված հետեւում եմ, էնպես չէ, որ ուշքս գնում է: Քաղաքական դաշտը վերածել են մեծ գծանոցի, էս ի՞նչ վիճակ է: Ինձ զարմացնում են սրանց հետեւից գնացողները: Ոնց որ մեռելի քարի վրա թմբուկ նվագող լինի: Պարտությունն էլ է մարդու համար, բայց պարտությունը ֆետիշացնելը խելագարություն է: Սրանց նպատակը ամեն ինչ անելն է, որպեսզի մինչեւ 2018-ը եղած բոլոր արժեքները ոչնչացնեն՝ աղմուկով: Սա ամեն ինչ բարձրաձայն է անում, որ մարդիկ զրկվեն իրենց հիշողությունից: Նույն Ներոնի տեսարանն է՝ հաց եւ տեսարաններ: Հացն ու ցորենը բերում են Ադրբեջանով, տեսարանն էլ թմբուկն է, Փաշինյանը ոչ մի նոր բան չի սովորել, Ներոնին է կրկնում՝ հաց եւ տեսարաններ: Զարմանում եմ, թե մեր ազգը ոնց կարող է հացի եւ տեսարանների կուտն ուտել: Այ հոգնածներ, 5 հազար տղա զոհվեց, որ չերեզ Ադրբեջան բենզին բերեք ու մի հատ էլ մա՞մտ թափ տաք:

**Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**

# ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ՆԻԿՈԼԻ ԵՐԱԶԱՆՔԻՆ

Ընդդեմ լրագրողների ու լրատվամիջոցների՝ 2025-ին 61 դատական հայց է ներկայացվել, եւս 2-ը՝ հեղինակային պաշտպանության պահանջով: 2024-ին այդ թիվը 43-ն էր: 63-ից 31-ը պետական մարմինների կամ պաշտոնյաների կողմից է. Ալեն Սիմոնյան, Նիկոլ Փաշինյան, նրա աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյան, արտգործնախարար Արարատ Միրզոյան, ՔՊ պատգամավորներ Հայկ Սարգսյան, Ռուստամ Բաքոյան, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյան եւ այլք: 2025-ին դատարանները բավարարել են լրատվամիջոցների դեմ ներկայացված 15 հայց, որով պարտավորեցրել են հերքում հրապարակել եւ, ընդհանուր առմամբ, 3,3 մլն դրամ փոխհատուցում վճարել: Հայցերից բացի, 2025-ի ընթացքում արձանագրվել է նաեւ լրագրողների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի, սպառնալիքի, վիրավորանքի, գործունեությանը խոչընդոտելու 45 դեպք, որոնցից 33-ը՝ պետական մարմինների ու պաշտոնյաների կողմից: Այդ միջադեպերի հերոսներն են եղել ԱԺ նախագահը, պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանը, Վիլեն Գաբրիելյանը, Արսեն Թորոսյանը, Տիգրան Ավինյանը: Նույնիսկ ֆիզիկական բռնություններ են եղել՝ 15 դեպք. մի մասը՝ իրավապահների կողմից, մյուս մասը՝ իշխանության համակիրների:

Իրավապաշտպան, քաղաքական գործիչ **Նինա Կարապետյանցը**, անդրադառնալով թեմային, ասում է. «Ընտրություններին ընդառաջ սպասելի իրավիճակ է: 2025 թվականը ՔՊ-ի համար նախընտրական, նախապատրաստական տարի էր: Նրանց գործողությունների շարքը ցույց է տալիս, որ արդեն վաղուց են սկսել իրենց պայքարը: Տարբեր օրենքների կարգավորումներ, հայցեր, ճնշումներ, քրեական գործեր եւ այլն, փաստում են այն մասին, որ այս մարդիկ հետեւողականորեն ընտրություններին են պատրաստվում, մի մասին՝ լռեցնելու, մի մասի գործունեությունը խափանելու եւ այլն: Հստակ ծրագիր ունեն եւ գնում են իրենց ծրագրին ընդառաջ: Նրանց լրագրողները խանգարում են, քանի որ բացահայտում են իրենց: 61 դատական հայց՝ մեկ տարում, իհարկե, խոսքը հենց այն լրատվամիջոցների մասին է, որոնք կարողանում են բացահայտել իշխանության իրական դեմքը, կարողանում են ճիշտ լուսաբանել եւ հասարակությանը ցույց տալ իշխանության բոլոր այն երանգները, որոնք քողարկելու համար Փաշինյանն իր պրոպագանդիստների ու կեղծ քաղհասարակության հետ ջանք ու եռանդ չի խնայում: Լրագրողները խանգարում են Նիկոլի եւ իր թիմակիցների վերարտադրման երազանքին: Մի կողմից էլ, նրանք նաեւ առաջադրանքներ ունեն դրսից: Լրագրողները ոչ միայն Նիկոլի եւ իր թիմակիցների համար են խնդիր, այլեւ՝ պատվիրատուների եւ շահառուների համար: Նիկոլի թեւութիկունքը նույնպես պայքարում է լրագրողների դեմ»:



Բայց ԵԽԽՎ-ն իր զեկույցում գովաբանեց Փաշինյանի իշխանությանը: «Իրականում այդ ամենը մեր ընդդիմության չաշխատելու արդյունքն է: Ի վերջո, այդ գործուղումներն ինչ-որ երկրներ գնալու եւ վայելելու համար չեն միայն, այլ՝ հետեւողականորեն աշխատելու: Ես չեմ հավատում, որ նման՝ կյանքից կտրված զեկույցներ լինեին, եթե իսկապես ընդդիմությունը ջանքեր թափած լիներ: Այստեղից էլ կասկած է առաջանում շատերի մոտ, որ ընդդիմությունն ու իշխանությունը մի խաղ են խաղում»:

ԿԻՐԱՆՑ



# ԶԻՆՎԱԾ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ ԿԻՐԱՆՑԻ ՊԱՏԻ ՄՈՏ, ԼՈՒՍԱՆԿԱՐՎՈՒՄ, ԳՆՈՒՄ

ՀՀ բանակի կազմավորման 34-րդ տարեդարձի առթիվ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուղերձ է հղել, որտեղ անդրադարձել է 2020 թվականից հետո Ադրբեջանի զինուժի կողմից ՀՀ սահմանամերձ տարածքների օկուպացիայի խնդրին. «Ինչ վերաբերում է ՀՀ օկուպացված տարածքներին, այդ հարցի լուծման բանաձեւը, որն արձանագրված է Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգում, արդեն իրավական բարձրագույն ուժ ունի երկու երկրներում, եւ խնդիրը կլուծվի սահմանազատման գործընթացում»:

Սահմանազատման անվան տակ, ապօրինի, միակողմանի կերպով Կիրանցի հողերը հանձնելուց հետո անցել է ավելի քան մեկուկես տարի, ՞ինչ եղավ սահմանազատման գործընթացը, ինչո՞ւ 2020 թվականից հետո Ադրբեջանի կողմից օկուպացված 215 քառակուսի կիլոմետր տարածքից եւ ավելի քան 30 տարի օկուպացված տասնյակ հազարավոր հեկտարների հասնող մեր տարածքներից ոչ մի մետր չի վերադարձվել Հայաստանին: Երբ Տավուշի մարզում կատարվում էր սահմանազատում, Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը դեռեւս հաստատված չէր, Կիրանց-Ոսկեպար հատվածում ավելի քան 30 տարի ամրացված դիրքերը, Կիրանցի գյուղի 56 սեփականատերերին պատկանող հողամասերը, ընդհանուր առմամբ՝ շուրջ 15 հեկտար հողատարածք, Ադրբեջանին հանձնվել է առանց իրավական հիմքի: Սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգ կոչված փաստաթուղթը դրանից հետո ընդունվեց:

Այն ժամանակ Հայաստանի պաշտոնյաները հայտարարում էին, որ առաջիկայում սահմանազատումը կատարվելու է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի սահմանների հատման կետից: Այդ կետը Նոյեմբերյան համայնքի Կողբ եւ Բերդավան գյուղերի սահմանագոտում է: Սակայն ոչ միայն այդ կետում, այլեւ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանի այլ հատվածներում 2024 թվականից հետո սահմանազատում չի կատարվել, հայտնի էլ չէ, թե երբ կիրականացվի: Մինչդեռ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերին պատկանող շատ տարածքներ ավելի քան 30 տարի գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ: Նման հսկայական տարածքներ կան Նոյեմբերյան համայնքի Կոթի, Դովեղ, Բերդավան, Բարեկամավան գյուղերում, Իջեւան համայնքի Բերքաբեր, Վազաշեն գյուղերում, Բերդ համայնքի Պառավաքար, Մովսես եւ այլ բնակավայրերում: Բերդ համայնքի սահմանագոտու բարձունքները, Իջեւան-Բերդ ավտոճանապարհին հարակից բարձրադիր գոտին գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո: Ինչպե՞ս ստացվեց, որ 2024 թվականին սահմանազատման անվան տակ Իջեւան համայնքի Բերքաբեր գյուղի մոտակա պաշտպանական դիրքերը հանձնվեցին Ադրբեջանին, իսկ Բերքաբերին պատկանող, 1976-1980 թվականներին կառուցված Ջողազի ջրամբարի ձախ ափին գտնվող, խորհրդային ժամանակներից Բերքաբերին պատկանող շուրջ 900 հեկտար հողերից ոչ մի հեկտար սահմանազատումով չվերադարձվեց Բերքաբեր գյուղին, Հայաստանին:

Նիկոլ Փաշինյանը Հայաստանի հանրությանը ներկայացնում է, որ սահմանազատման անվան տակ Ադրբեջանին տարածքներ հանձնելու հետեւանքով կառուցված Կիրանցի պատը Հայաստանի անվտանգության ապահովման գործիք է: Նա պարբերաբար խմբերով ՀՀ քաղաքացիներին տանում է Տավուշ, այցեր կատարում այդ պատի մոտ, որտեղ զբոսավարի կերպարի մեջ մտած՝ այդ քաղաքացիներին ներկայացնում է, թե որքան անվտանգ ու երջանիկ են ապրում Կիրանցի բնակիչները: 2025թ. դեկտեմբերի 6-ին Կիրանց այցելած քաղաքացիների 50 հոգանոց խմբին, օրինակ, Փաշինյանը հայտնել է, որ այդ այցի նպատակն է՝ ցույց տալ Հայաստանի անվտանգության ապահովման այն կոնցեպտը, որով առաջնորդվում է կառավարությունը: Նա ընդգծել է, որ երկրի անվտանգությունը միայն բանակի շնորհիվ հնարավոր չէ ապահովել, անվտանգության ապահովման գործիքները պետք է լինեն բազմազան, եւ Կիրանցի պատն անվտանգության այդ գործիքներից մեկն է: Կիրանցում նաեւ հայտարարել է. «Սա անվտանգության ապահովման մի լրացուցիչ կոնցեպտ է եւ խաղաղության օրակարգի մեր պատկերացումը: Վստահաբար ասում եմ՝ Կիրանցը Հայաստանի ամենաանվտանգ գյուղերից է»:

Կիրանցի բնակիչները ճիշտ հակառակն են ասում: Նրանք ինձ հետ զրույցում ասացին, որ հիմա ամենեւին էլ իրենց անվտանգ չեն զգում, քանի որ տեսնում են, որ ժամանակ առ ժամանակ ադրբեջանական զինյալների 4-5 հոգանոց խմբեր, ինքնաձիգներով զինված, մոտենում են այդ պատին: Ամռանը ադրբեջանցի քաղաքացիական անձանց խմբեր էլ են եկել այդտեղ, նկարվել Կիրանցի կամրջի վրա, սահմանազատման անվան տակ Ադրբեջանին հանձնված այլ տարածքներում:

Կիրանցի բնակիչները պատմեցին, որ սահմանազատման անվան տակ Ադրբեջանին հանձնված հողերի տերերին պետբյուջեից փոխհատուցումը կատարվել է գաղտնի կերպով, հայտնի չէ՝ ինչ կարգով, սկզբունքով: Նրանց խոսքով՝ Կիրանցի բնակիչ կա, որից հող չի հանձնվել Ադրբեջանին, սակայն գյուղի բնակիչների շրջանում կազմակերպչական աշխատանքներ տանելու, հողերը հանձնելու դեմ բնակիչների դիմադրությունը հաղթահարելու համար այդ բնակչին տրվել է 240 հազար դոլարին համարժեք գումար: Կիրանցի մի բնակչի, որը գյուղում առեւտրական գործունեությամբ է զբաղվում, Ադրբեջանին հանձնված իր հողամասի դիմաց առաջարկել են ռեկորդային գումար՝ 260 միլիոն դրամ. սակայն խիստ սկզբունքային է գտնվել մարդը եւ հրաժարվել է այդ մեծ գումարից: Ի դեպ, այդ մասին Տավուշի մարզպետն էլ է մի առիթով ասել, որ մարդ կա՝ հրաժարվել է փոխհատուցում ստանալուց:

Ընդհանուր առմամբ, Կիրանցում հանձնված հողերի համար գյուղի 6 բնակիչ, հիմնականում՝ ազատամարտում զոհվածների հարազատներ, սկզբունքորեն հրաժարվել է դրամական փոխհատուցում ստանալուց: Ադրբեջանին հանձնված հողամասերի դիմաց դրամական փոխհատուցում ստացած եւ դրանից հրաժարված բնակիչների փոխհարաբերություններում, այդ հողի վրա, որոշակի սառնություն, չհասկացվածություն է ծագել:

**Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ**

# ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՈՒՄ Է՝ ԱՊԱՑՈՒՑԵՔ, ԹԵ 1992 ԹՎԻՆ ՈՆՑ ԵՔ ԿԱՐՈՂԱՑԵԼ ՀԵՌԱԽՈՍ ԱՌՆԵԼ



ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը հերթական հայցերն է ներկայացրել ընդդիմադիրների դեմ, այս անգամ՝ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Ռուբիկ Հակոբյանի, նրա կնոջ եւ որդու՝ Երեւանի ավագանու ընդդիմադիր անդամ Սամվել Հակոբյանի, ինչպես նաեւ՝ Սյունիքի նախկին մարզպետ, ԱԺ նախկին պատգամավոր Վահե Հակոբյանի եւ նրա ընտանիքի անդամների դեմ:

«Հրապարակ»-ի հետ զրույցում **Սամվել Հակոբյանը**, անդրադառնալով իրենց գույքերն ուսումնասիրության ենթարկելուն եւ նշված հայցին, ասաց. «Դեռ հայցը չեն ներկայացրել, բայց խոսքն այն տների մասին է, որտեղ ապրում ենք, եւ այն մեքենաների մասին, որոնք վարում ենք: Եթե մենք ընդդիմադիր ենք, դրանք էլ ապօրինի են, էլի. ես այդպես եմ հասկանում: Խտրական վերաբերմունք եւ քաղաքական վերաբերմունք կա այս ամեն ինչում: Բռնել՝ ԱԱԾ, դատախազություն եւ այլ ուժային կառույցներն օգտագործել մեր ընտանիքների պես ընտանիքների դեմ, մի քանի տարվա ինչ-որ օպերատիվ աշխատանքներ իրականացնելու վրա, հետո էսքան սխալ ձեւով... ակնհայտ երեւում է, որ այդ կառույցները չեն ծառայել իրենց նպատակներին, այլ օգտագործվում են որպես ռեպրեսիվ միջոց»:

Նա նշեց, որ դեկտեմբերին՝ ավագանու նիստի վերջին օրը, իրեն զանգել են եւ հրավիրել դատախազություն. «Հետաքրքիր զուգադիպություն է, որ ավագանու վերջին նիստի օրն ինձ զանգեցին, կանչեցին դատախազություն եւ ծանոթացրին: Եվ հետաքրքիրն այն է, որ մեկ այլ գործով, որտեղ 7 տարի ուզում են ապացուցել, որ մենք մեղք ունենք, մի ապօրինի գործարքի հետ, որի հետ մենք գործ չենք ունեցել, այլ ձեռք բերողի կարգավիճակով այդ գույքը ձեռք ենք բերել, նոր եկավ վճռաբեկի վճիռը, որ մենք հաղթել ենք, եւ այդ հաղթածի ֆոնին նոր գործ են բերել: Այս մեկը պրծանք, հիմա գնում են մեկ ուրիշ դաշտ, էլի, որ եկեք ապացուցեք, թե 92 թվին որտեղից եք կարողացել հեռախոս առնել, բայց 92 թվին բոլորս էլ գիտենք, թե ինչքան մարդ է ունեցել գրանցված, ֆորմալ փաստաթղթեր»:

Նշենք, որ Ռուբիկ Հակոբյանը նաեւ քրեական գործով է անցնում, նա մեղադրվում է իշխանությունը զավթելուն ուղղված հրապարակային կոչերի համար: Մեկ ամսից ավելի Նուբարաշենի բանտում անցկացրած 70-ամյա Ռ. Հակոբյանն օգոստոսին ազատ արձակվեց, սակայն դատական նիստերը մինչ օրս շարունակվում են:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն ուսումնասիրել է նաեւ ԱԺ «Հայաստան» դաշինքի նախկին պատգամավոր Վահե Հակոբյանի, նրա կնոջ՝ Էլիզաբեթ Պետրոսյանի, եղբոր՝ քրեական գործով անցնող Կարեն Հակոբյանի, եւ նրանց ընտանիքի անդամների գույքը, եզրակացրել, որ դրանք ապօրինի են եւ բռնագանձման ենթակա: Ապօրինի գույքի բռնագանձման պահանջով Գլխավոր դատախազությունը քաղաքացիական հայց է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Հակոբյանների: Գործը երեկ հասել է դատարան եւ մակագրվել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանի դատավոր Նարինե Ավագյանին: Հակոբյանի կնոջից՝ «Պարաթիվի»-ի խմբագիր **Էլիզաբեթ Պետրոսյանից** «Հրապարակ»-ը հետաքրքրվեց, թե ինչ գույքերի մասին է խոսքը, քանի միավոր: «Դեռ ամբողջովին ինֆորմացիայի չենք տիրապետում, փաստաբանները դեռ ծանոթանում են: Շատ գույք էլ չունենք, հավանաբար, ծնողների բնակարանն է, հենց ծանոթանամ՝ կասեմ: Մենք պատկերացում չունենք, թե ինչ գույքերի մասին է խոսքը, մենք ապօրինի գույք չունենք: Ծանոթանալու հրավիրել էին միայն անչափահաս երեխայի, ինչ-որ թուղթ է ստորագրել եւ եկել: Պարզ է, սա քաղաքական շոուի մաս է, Նիկոլն ինչ-որ շոու է ուզում ստանալ: Որ քաղաքական էլեմենտ կա, դա բոլորին պարզ է»: Էլիզաբեթ Պետրոսյանն ուղիղ եթերների շարք է անում, որտեղ կարճ տեսանյութերով խիստ քննադատության է ենթարկում այս իշխանություններին: Նշենք նաեւ, որ Վահե Հակոբյանը 2025 թվականի հոկտեմբերի 31-ից գտնվում է հետախուզման մեջ: Նրա նկատմամբ քրեական վարույթ է հարուցվել, մեղադրվում է «մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու եւ փողերի լվացման մեջ»: Սա եւս ընդդիմությունը համարում է քաղաքական հետապնդում:

**Աննա ՊԱՊԻԿՅԱՆ**

ԿՈՆՖԼԻԿՏ

# ՈՒՆԻԿԱԼ՝ ԽԻՍՏ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ, ԲԱՑԱՌԻԿ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ

Ռոբերտ Քոչարյանն իր ասուլիսում ՀՀ վարչապետից բացի եւս երկու ղեկավարի անուն տվեց նույն շարքից՝ Սահակաշվիլի եւ Զելենսկի: Սրանք այն խելագարներն են, որոնք, գալով իշխանության, համապատասխանաբար՝ Վրաստանը, Ուկրաինան եւ Հայաստանն ինքնիշխան երկրներից դարձրին կախյալ գոյացություններ: Ամեն ինչ չափից ավելի ակնհայտ է: Ուշադիր նայենք հետխորհրդային քարտեզին: ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանը, Ուկրաինան եւ Հայաստանն են այն երկրները, որոնք ունեցան պատերազմներ, մարդկային եւ տարածքային կորուստներ: Մյուսներին առայժմ ոչ մի գրող չի կպել, եթե չասենք, որ հասցրել են հետխորհրդային ժամանակահատվածում բավականին զարգանալ եւ ամրապնդել իրենց սուվերենությունը միջազգային ասպարեզում: Մերձբալթյան հանրապետությունների մասին չեմ խոսում, որովհետեւ նրանց խնդիրները լուծվեցին միանգամայն այլ գործընթացներով եւ միանգամայն այլ հանգամանքներում:

Մեզ հետաքրքրող հարցը հետեւյալն է. ինչո՞ւ Վրաստանը, Ուկրաինան եւ Հայաստանը ստացան պատերազմ եւ կրեցին մարդկային ու տարածքային կորուստներ, եթե կարելի էր այդ ամենից խուսափել: Ինչպե՞ս... Շատ պարզ՝ Ռուսաստանի հետ երկխոսելով: Դուք երբեւէ լսած կա՞ք, որ Ռուսաստանը Սահակաշվիլուց պահանջած լինի Հարավային Օսիան եւ Աբխազիան: ԽՍՀՄ փլուզումից հետո ռուսներն այդ ե՞րբ էին Ուկրաինայի իշխանությունների առջեւ Ղրիմի եւ Դոնբասի հարց դրել: Հիշեք, թե ինչպես էր Ռուսաստանը ԽՍՀՄ սեւծովյան նավատորմը կիսում Ուկրաինայի հետ: Վա՜տ էր: Հիշեք, թե ինչպես էր ծաղկում Ուկրաինան, քանի դեռ հանդիսանում էր ռուսական գազի՝ Եվրոպա արտահանման հիմնական տրանզիտային երկիրը... Չէ, պետք էր բզբզել, քանդել Ռուսաստանի հետ կապերը, դառնալ էշ նահատակ՝ հանուն արեւմտյան տերերի հակառուսական նկրտումների: Արեւմուտքի հետ այդ ի՞նչ տնտեսական հրաշքներ էին ուզում գործել Վրաստանն ու Ուկրաինան... Ռուսաստանի շուկա՜ն էր նրանց համար փոքր, թե՞ ողջ ԱՊՀ-ի: Եվ հիմա, երբ իրենք չկան ո՛չ արեւմտյան շուկաներում, ո՛չ ԵԱՏՄ-ի, ինչի՞ են հասել, ի՞նչ «հաջողություններ» են արձանագրել՝ կորուստներից բացի: Դուք որեւէ գերմանացու գիտե՞ք, որ վրացական կամ ուկրաինական ապրանքները գերադասում է գերմանական ապրանքներից: Բա եթե նույնիսկ դրան չէին հասնելու, ինչո՞ւ Սահակաշվիլին եւ Զելենսկին նման զուլում բերեցին իրենց երկրների եւ ժողովրդի գլխին: Պատասխանը մեկն է՝ Սահակաշվիլին եւ Զելենսկին Արեւմուտքի դրածոներն են՝ հար եւ նման մեկը մյուսին:

Այս շարքի երրորդ արկածախնդիրը Հայաստանի ներկա վարչապետն է: Նրան շատերն են դնում Սահակաշվիլու եւ Զելենսկու կողքին, բայց դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանը հետխորհրդային այն երկիրն էր, որ ամենամեծ ցանկության դեպքում էլ չէր կարող որեւէ խնդիր ունենալ Ռուսաստանի հետ... Ո՛չ ընդհանուր սահման, ո՛չ ռուսական գազի ճանապարհը փակելու հնարավորություն... Ագրարային երկիր էր՝ Շվեյցարիա դառնալու բոլոր հնարավորություններով: Ավելին ասեմ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը միակ իրավաբանական սուբյեկտն էր, որ ԽՍՀՄ-ից անջատվելուց հետո դե ֆակտո միացել էր Հայաստանի Հանրապետությանը՝ մոտ 50 տոկոսով ընդլայնելով ՀՀ տարածքը: Այսինքն, ՀՀ վարչապետը Սահակաշվիլուց եւ Զելենսկուց մի 10-ն անգամ «խելացի» եւ «հունարով» պետք է լիներ, որ կարողանար այնքան բզբզել հակառուսական խաղաթուղթը, որ թաթալոշ ստանար Բաքվից: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ է արել: Նրա արեւմտյան տերերը, տեսնելով, որ հնարավոր չէ Հայաստանին հանել Ռուսաստանի դեմ, ՀՀ վարչապետի անմիջական մասնակցությամբ խաղարկեցին Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը: Արդյունքում՝ Արեւմուտքը հասավ իր մուրազին (Ռուսաստանը թուլացավ Հարավային Կովկասում), Ադրբեջանը՝ իր (հափռեց Արցախի Հանրապետությունը), իսկ Հայաստանը հավասարվեց Վրաստանին եւ Ուկրաինային (պատերազմ, մարդկային եւ տարածքային հսկայական կորուստներ): Պատկերը սա է:



Իսկ հիմա տեսնենք, թե էլ ինչով է ՀՀ վարչապետը տարբերվում Սահակաշվիլուց եւ Զելենսկուց: Այսօր փաստ է, որ երեքն էլ հողատու են, այն է՝ սուվերենության կորուստ են ունեցել: Իսկ ինչպե՞ս են նրանք վերաբերվում այդ փաստին, արդյոք միանմա՞ն են գնահատում դա: Սահակաշվիլին, օրինակ, երբեւէ հայտարարե՞լ է, որ իրենք տվել են Հարավային Օսիան ու Աբխազիան, որպեսզի պահեն Վրաստանը: Ես նման բան բատոնո Սահակաշվիլուց երբեք չեմ լսել: Արժանին մատուցենք Զելենսկուն... Մարդը որոշել է կռվել մինչեւ վերջին ուկրաինացին... Բայց կարող էր, չէ՞, հայտարարել՝ բա մեզ Ղրիմ ու Դոնբաս պե՞տք ա, որ մենք դրանց համար պատերազմենք: Ամերիկացիք տիրացան Ուկրաինայի ընդերքին, ԵՄ-ն պատրաստ է կուլ տալու Արեւմտյան Ուկրաինան, բայց Զելենսկու տանձին չէ, նա շարունակում է հերոսաբար կռվել ռուսական ճակատում ու լավ էլ կռվում է ամեն գետի, ամեն ջրափոսի, ամեն բլրակի, ամեն ածխահորի համար: Մինչդեռ ՀՀ վարչապետը, որ, ի տարբերություն Սահակաշվիլու եւ Զելենսկու, իհրավի ունիկալ երեւույթ է, տեսեք, թե ինչ է մոգոնել: Ասում է. «Ոչ թե Ղարաբաղը մերն էր՝ այլեւս մերը չէ, այլ ՀՀ-ն մերը չէր եւ այլեւս մերն է»: Կներեք, բայց սա արդեն խնդալու չէ: Կարծում եմ, որ ժամանակն է Հայաստանում ոչ թե եվրոպական համաժողովներ գումարել, այլ համաշխարհային հոգեբույժների կոնսիլիում, խորհրդակցություն՝ հիվանդությունն ախտորոշելու եւ նրա բուժման միջոցները որոշելու համար: Մարդը մի կողմից ուղերձ է հղում Հայոց բանակի 34-ամյակի կապակցությամբ, մյուս կողմից՝ հայտարարում, որ մենք Հայաստան չենք ունեցել, եւ իր շնորհիվ է, որ այսօր ունենք: Մնում է «Հայաստանի Հանրապետության հիմնադիր հոր» տիտղոս տալ եւ ուղարկել բուժման:

Էդիկ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

# ԲԱՆԴԵՐԼՈԳՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԴՀՈԼՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ, ԸՍՏ ՔԻՓԼԻՆԳԻ

Ընտրապայքարի ընթացքում առաջնորդի կերպարը հետաքրքիր դարձնելուն ուղղված՝ ի՞նչ կանի ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Դե, տեսնում ենք. ուրիշները թմբուկ են խփում, համերգներ են տալիս, տարբեր էքստրավագանտ բաներ են անում, խոսում են չինարեն: Քոչարյանը՝ չէ, մտադրություն չունի նոր հմտություններ ցուցադրելու: Ասաց՝ կապիկություն հաստատ չեմ անելու: Եվ, իհարկե, ընտրողը անընդհատ կլինի սառը-տաք ցնցուղի տակ: Սառը ցնցուղը կապահովեն նրանք, ովքեր որոշել են երգել, պարել, թմբկահարել ու սրտիկել՝ էմոցիոնալ լիցք հաղորդելով ընտրապայքարին: Նաեւ որոշել են ապացուցել, որ բաց են եւ մաքուր, անկեղծ են. իրենց թերություններով ու թուլություններով հանդերձ, կարող են կանգնել ընտրողի առաջ եւ ինքնաբուխ երգել, կարծես՝ երգել գիտեն, կարող են նվագել, կարծես՝ լավ են նվագում: Որոշել են զվարճացնել ընտրողին ու հաղորդել թեթեւ եւ անբռնազբոս տրամադրություն՝ ցավից ու դարդից անդին, կորուստներն ու ձախողումները՝ մոռացած, ապագայի հանդեպ մեծ հույսով ու հավատով:

Իսկ ընդդիմադիրները, թերեւս, տաք ցնցուղ են լինելու՝ ընտրապայքարում հանդես գալով ռացիոնալ, ո՛չ էմոցիոնալ, ո՛չ էլ պոպուլիստի կերպարով: Այսպես կստացվի, որ մրցակիցները պայքարում են տարբեր հարթությունների վրա, եւ ընտրողը շփոթված կհետեւի նրանց՝ մե՞կ կհիշի աղետալի կետին հասած հայրենիքը, մե՞կ կլսի այդ ճանապարհը հարթողների համերգները:

Բոլոր համընկնումները պատահական են...

«Բանդերլոգ կապիկների քաղաքը» խիտ անտառով տարանջատված է մարդկանց բնակավայրից, նրանք գրեթե չեն հանդիպում, եւ միակ արարածը, որ կապ հաստատեց այդ երկու տարածքների միջեւ, Մաուգլին էր: Այսինքն՝ նա, ով կկարողանա դուր գալ այս երկու հարթություններին հետեւող տարակուսած ընտրողին, որոշակիորեն պետք է նման լինի... այո, Մաուգլիին: Նա պետք է լինի նրա պես ազնիվ, անշահախնդիր եւ համարձակ, նույնքան էլ՝ արդարամիտ: Նա պետք է լինի «մարդու զավակ»-ը, որ, թերեւս, բանդերլոգների այդ աշխարհում գոյատեւել է՝ առանց փչանալու, ապրել է բանդերլոգների մեջ, բայց չի դարձել կապիկ՝ մնացել է մարդ, գայլերի մեջ չի վերածվել գայլի, չի վերածվել արջի, չի դարձել թունոտ, ինչպես օձը, մնացել է մարդու զավակ, որն անգամ արյան կանչով ունի իր մարդկային էության հիշողությունը:

Ո՞վ կլինի այդպիսին ընդդիմադիրներից: Բնականաբար, որեւէ մեկի վրա հույս դնել չենք կարողանալու: Ընդդիմադիր դաշտը, թերեւս, չի հասցնի ձեւավորել այն մեկ ուժեղ առաջնորդին, որին կհասկանա ընտրողը, որին ոչնչում չի մեղադրի, կվստահի: Ուրեմն, կարող է հաղթել հավաքական ընդդիմադիր կերպարը: Պետք է հաղթի թիմը, որն իր մեջ ամփոփում է բոլոր այն հատկությունները, որոնք հույս են ներշնչում, որ կարող են արդարացնել ընտրողի ակնկալիքները: Մեկ խարիզմատիկ առաջնորդ ունենալը հաղթանակի համար գուցե ավելի լավ երաշխիք է, բայց ոչ այն իրավիճակում, որում հայտնվել է Հայաստանը:



Եվ հիշենք Քիփլինգի այս ամբողջ պատմության հիմնական միտքը. ջունգլիներում դհոլները՝ կարմիր շները, հարձակվում են անտառի բոլոր բնակիչների վրա (Քիփլինգ, The Jungle Book, «Red Dog»). “They are the dholes, the red dogs of the Deccan.” Եվ այսպես, մեծ պայքար է սպասվում, եւ անհայտ է ելքը: Բայց «դհոլներ» կոչվող վայրի շները հաջողությամբ հետ են շպրտվում, քանի որ նրանց դեմ կարողանում են միավորվել անտառի ուժեղները, իմաստունները եւ հավատարիմները՝ հանուն մեծ պայքարի: Միավորված՝ դա կլինի «փառահեղ որս», որոշում են նրանք: Այս փորձառությունն ու հաղթանակը ցույց են տալիս, թե որքան կարեւոր է թիմային աշխատանքը ամենավտանգավոր իրավիճակներում: Բոլորը գիտեն այս պատմությունը դեռ մանկուց, բայց մեծանալով՝ մոռանում են փառահեղ հեքիաթները, որոնք հեքիաթ չեն իրականում, այլ հուշումներ են՝ այլաբանական ճանապարհային քարտեզ, թե ինչպես է միավորված միտքը հաղթահարում ցանկացած փորձություն: Դե ինչ, ընդդիմությունն ընդունո՞ւմ է մարտը, թե՞ որոշել են ամենատարբեր դհոլների դեմ պայքարել պառակտված՝ հայտնի կդառնա արդեն շատ շուտով:

Շաքե
ԱՎՈՅԱՆ

# ԻՆՉՊԻՍԻՆ Է ԹԲԻԼԻՍԻԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ TRIPP-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*«Հրապարակի» զրուցակիցը վրացի քաղաքագետ **Գելա Վասաձեն** է:*



**- Հարցին, թե ինչու է ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը փետրվարին այցելում Երեւան եւ Բաքու, բայց ոչ՝ Թբիլիսի, Վրաստանի վարչապետն ասել է, որ դա տրամաբանական է, քանի որ այցը կապված է TRIPP նախագծի հետ: Միաժամանակ Կոբախիձեն ընդգծել է, որ Վրաստանը պատրաստ է վերականգնել իր ռազմավարական գործընկերությունն ԱՄՆ-ի հետ, եւ ակնկալում է կոնկրետ քայլեր ԱՄՆ-ից: Այդուհանդերձ, Վենսի օրակարգից Վրաստանի բացառումը զուտ Վաշինգտոնի խաղաղարար նախաձեռնությունները խթանելու նպատակո՞վ են միայն, թե՞ ազդակ է Թբիլիսիին:**

- Վենսի երթուղուց Թբիլիսիի բացակայությունը պատահականություն կամ TRIPP նախագծի հետ զուտ «տեխնիկական» կապ չէ, այլ զգույշ դիվանագիտական ազդանշան: Ֆորմալ առումով Իրակլի Կոբախիձեի բացատրությունը տրամաբանական է թվում. այցն իսկապես կապված է հայ-ադրբեջանական ուղղության եւ Հարավային Կովկասի նոր լոգիստիկ եւ անվտանգության ճարտարապետության հետ, որտեղ Վրաստանը բանակցությունների անմիջական կողմ չէ, բայց իրականում Միացյալ Նահանգներն այսօր գործում է ոչ թե արարողակարգի, այլ շահերի տրամաբանության համաձայն, եւ այս տրամաբանությանը համապատասխան՝ Վաշինգտոնն աշխատում է նրանց հետ, ովքեր կա՛մ լուծում են հակամարտությունները, կա՛մ ստեղծում են ապագայի ենթակառուցվածքները. Բաքուն եւ Երեւանը ուղղակիորեն տեղավորվում են այս շրջանակում, մինչդեռ Վրաստանը հայտնվել է միջանկյալ գոտում՝ որպես աշխարհագրորեն կարեւոր, բայց քաղաքականապես չվերահաստատված ակտիվ գործընկեր, եւ, հետեւաբար, «ռազմավարական գործընկերությունը վերականգնելու պատրաստակամության» մասին արտահայտությունը հնչում է ոչ թե որպես ուժի դրսեւորում, այլ՝ հարաբերություններում դադարի ճանաչում: Սա պատիժ կամ դեմարշ չէ, այլ Թբիլիսիի մեղմ, բայց հասկանալի ուղերձ. ամերիկյան նոր տարածաշրջանային տրամաբանության մեջ միայն հռչակագրերն այլեւս բավարար չեն՝ կարգավիճակը վերականգնվում է գործողություններով, այլ ոչ թե Վաշինգտոնի գործողություններին սպասելով:

**- Վրաստանի քաղաքական եւ փորձագիտական շրջանակներն ինչպե՞ս են գնահատում այս տեղեկատվությունը: Ընդդիմադիր ուժերը որեւէ կերպ արձագանքե՞լ են, դիսկուրս կա՞ այդ թեմայով:**

- Վրաստանի քաղաքական եւ փորձագիտական շրջանակներում այս տեղեկատվությունն ընդունվել է առանց հիստերիայի, բայց ակնհայտ ներքին լարվածությամբ. այցի ծրագրից Թբիլիսիի բացակայությունը ընդդիմությունն օգտագործեց որպես լրացուցիչ փաստարկ՝ երկրի արտաքին քաղաքականության մեկուսացման եւ Միացյալ Նահանգների նկատմամբ վստահության կորստի թեզի օգտին՝ նշելով, որ Վրաստանը, չնայած իր աշխարհագրությանը, այլեւս Վաշինգտոնի կողմից չի դիտվում որպես տարածաշրջանային գործընթացների ակտիվ մասնակից: Միասնական ազգային շարժման ներկայացուցիչները եւ ընդդիմությանը հարող փորձագետները նմանատիպ կարծիքներ հայտնեցին: Ի հակադրություն, իշխող թիմը ցուցաբերել է ակնհայտորեն հանգիստ, նույնիսկ տեխնոկրատ արձագանք. «Վրացական երազանքի» տրամաբանության մեջ Վենսի այցը հիմնականում վերաբերում է TRIPP-ին եւ հայ-ադրբեջանական օրակարգին, եւ, հետեւաբար, Վրաստանի բացակայությունը դրամատիզացման կարիք չունի. նման հռետորաբանությունը նպատակ ունի վերացնել արտաքին ճնշման զգացումը եւ իրավիճակը պահել «ոչ մի արտառոց բան տեղի չի ունենում» շրջանակներում: Մինչդեռ, փորձագիտական հանրությունը, ընդհանուր առմամբ, ավելի սթափ եւ խորաթափանց հայացք է նետում իրավիճակին՝ վերլուծական հրապարակումներն ու փակ քննարկումներն ավելի ու ավելի են ենթադրում, որ խնդիրը ոչ թե այս կոնկրետ այցի, այլ ամերիկյան մոտեցման փոփոխության մեջ է. ԱՄՆ-ն «լռելյայն» դադարեցրել է Վրաստանին ավտոմատ կերպով տարածաշրջանային օրակարգում ներառելը եւ այժմ ակնկալում է, որ Թբիլիսին չի հայտարարի ռազմավարական գործընկերության մասին, այլ կձեռնարկի գործնական քայլեր՝ հաստատելով դրա օգտակարությունը Հարավային Կովկասի նոր անվտանգության եւ լոգիստիկայի ճարտարապետության մեջ: Հիմնական եզրակացություն. երկրի ներսում այս իրադարձությունն արդեն դարձել է քաղաքական մեկնաբանության առարկա՝ ընդդիմությունն այն ընկալում է որպես մեկուսացման ազդանշան, կառավարությունը՝ որպես չեզոք դրվագ, իսկ փորձագետները՝ որպես ավելի լայն խնդրի ախտանիշ: Վրաստանն այլեւս ԱՄՆ-ի համար անվերապահ աջակցության կետ չէ եւ պետք է վերահաստատի իր դերը տարածաշրջանային կոնֆիգուրացիայում:

**- Իսկ ինչպիսի՞ն է պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշումը նույն TRIPP-ի վերաբերյալ՝ տարածաշրջանում դրական ընկալում ունեն Հայաստանն ու Ադրբեջանը, Թուրքիան, մասամբ՝ Ռուսաստանը: Իրանը, ըստ էության, դեմ է եւ պնդում է, թե այն կարող է օգտագործվել իր շահերին հակասող նպատակներով:**

- Թբիլիսիի պաշտոնական դիրքորոշումը TRIPP-ի վերաբերյալ չափազանց զգուշավոր է եւ միտումնավոր անորոշ. Վրաստանը դեմ չի արտահայտվում նախագծին, բայց նաեւ չի ձգտում այն ինտեգրել որպես քաղաքական համահեղինակ՝ սահմանափակվելով տարածաշրջանային կայունությանը եւ տարանցմանը նպաստող ցանկացած նախաձեռնության աջակցության չեզոք բանաձեւով: Իր հրապարակային հռետորաբանության մեջ Թբիլիսին ընդգծում է, որ TRIPP-ը, առաջին հերթին, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի հարց է՝ Թուրքիայի մասնակցությամբ: Հետեւաբար, Վրաստանն անհրաժեշտ չի համարում առանձին «քաղաքական դիրքորոշում» արտահայտել՝ հնարավոր հակամարտության գծերում չներքաշվելու համար: Այս զսպվածությունը հասկանալի է. մի կողմից, Թբիլիսին նախագիծը դիտարկում է որպես Բաքվի եւ Երեւանի համար փակուղուց դուրս գալու եւ տարածաշրջանը տնտեսապես ռացիոնալացնելու դրական գործիք, մինչդեռ Անկարան այն դիտարկում է որպես իր սեփական դերի ամրապնդման տարր: Մյուս կողմից, Վրաստանը գիտակցում է, որ Ռուսաստանի մոտեցումը TRIPP-ին պրագմատիկ եւ իրավիճակային է, մինչդեռ Իրանը բացահայտորեն այն դիտարկում է որպես իր ռազմավարական շահերի համար պոտենցիալ սպառնալիք՝ կասկածելով, որ այն ունի ոչ միայն տրանսպորտային, այլեւ ռազմաքաղաքական հետեւանքներ: Այս պայմաններում Թբիլիսին միտումնավոր խուսափում է կոշտ լեզվից՝ ձգտելով պահպանել մանեւրի տարածք եւ խուսափել տարբեր ուժային կենտրոնների հետ հարաբերությունների փխրուն հավասարակշռության խախտումից:

**- Վրաստանի նախկին նախագահ Միխայիլ Սաակաշվիլին կոշտ է արձագանքել Ադրբեջանի նախագահի կողմից տարածաշրջանում նոր տարանցիկ միջանցքի եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ ուղիղ չվերթների գործարկման մասին հայտարարությանը. «Ալիեւի հայտարարությունը, որ այսօր տարանցիկ երթուղին անցնում է Վրաստանի, իսկ վաղը կանցնի Հայաստանի միջով, ոչնչացնում է այն ամենը, ինչին մենք որպես երկիր հասել ենք 1990-ական եւ 2000-ական թվականներին: Վրաստանը հայտնվել է ծայրահեղ դժվարին աշխարհաքաղաքական փակուղու մեջ, որը շուտով կավարտվի կա՛մ մեր լուծարմամբ՝ որպես անկախ պետություն, կա՛մ մեր ազատագրմամբ»: Գույները չի՞ խտացնում:**

- Միխայիլ Սաակաշվիլու արձագանքն այս դեպքում ավելի է ամրապնդում բախման հռետորաբանությունը, քան պարզաբանում է տեղի ունեցողի իրական իմաստը: Այստեղ կարեւոր է նշել 2 հիմնարար կետ. նախ, նա պարզապես սխալ է մեկնաբանում Իլհամ Ալիեւի խոսքերը, որը խոսում էր ոչ թե Վրաստանը Հայաստանով «փոխարինելու» մասին՝ որպես տարանցիկ երկիր, այլ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ուղիղ լոգիստիկա սկսելու մասին, ինչը, տարածաշրջանի տրամաբանությամբ, նշանակում է բոլոր հաղորդակցությունների բացում, այլ ոչ թե առկա երթուղիների տեղաշարժ: Երկրորդ. այստեղ գլխավոր խնդիրը նոր միջանցքները չեն, այլ՝ վրացական մտածողության մի հին թերություն, երբ դու տարանցիկ երկիր ես, չես կարող թույլ տալ՝ ստեղծել արհեստական, մանր եւ հաճախ քաղաքականացված խնդիրներ հարեւանների համար. նման խնդիրներ վերջին տարիներին ստեղծվել են թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի համար՝ մաքսատուրքերի, ընթացակարգերի, հռետորաբանության եւ քաղաքական ազդանշանների միջոցով: Տարանցումն արտոնություն կամ պատմական նվաճում չէ, այլ՝ գործառույթ, որը պետք է անընդհատ հաստատվի կանխատեսելիության եւ հարմարության միջոցով, եւ հենց դա հաշվի չի առնում Սաակաշվիլու հուզական տրամաբանությունը, որը դիմում է 1990-ականների եւ 2000-ականների նվաճումներին:

**Արա ԱԼՈՅԱՆ**

# ԻՐԵՆՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՉԵՆ ՃԱՆԱՉՈՒՄ



2025թ. դեկտեմբերի 5-ին Դիլիջանի ավագանին որոշում է ընդունել՝ Վազգեն Սիմոնի Գեւորկյանին Դիլիջան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին: Որոշմանը կողմ է քվեարկել ավագանու 11 անդամ, դեմ կամ ձեռնպահ չի եղել: Ուշագրավ է, որ նույնիսկ համայնքի ավագանու անդամները չեն իմացել, թե ով է Վազգեն Գեւորկյանը: Ավագանու դեկտեմբերի 5-ի նիստում համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն ավագանու անդամներին հայտնել է, որ Վազգեն Գեւորկյանը «Գրինք Ռոք» կազմակերպության հիմնադիրն է, ֆինանսավորում է Դիլիջան քաղաքի մարզադպրոցը, նպաստում է համայնքի զարգացմանը, ներդրումներ է անում: Սակայն Դիլիջան համայնքի նույնիսկ ակտիվ բնակիչները չեն ճանաչում Վազգեն Գեւորկյանին: «Գրինք Ռոք» ընկերության ինտերնետային կայքում գրված է, որ այդ ընկերությունը «Դիլիջանում իրականացնում է առեւտրային եւ սոցիալական նախաձեռնություններ՝ կայուն աճը, զբոսաշրջությունը եւ կյանքի որակը խթանելու համար: Մեր առաջատար նախագիծը՝ բազմաֆունկցիոնալ համալիրը՝ հյուրանոցով, մշակութային վայրերով եւ հանրային տարածքներով, նախատեսված է ենթակառուցվածքային բացերը լրացնելու համար՝ միաժամանակ պահպանելով քաղաքի իսկական բնույթը: Ապագա ծրագրերը ներառում են նաեւ Art այգի եւ ժամանակակից համերգասրահ, որոնք ամրապնդում են Դիլիջանի դերը՝ որպես մշակութային եւ գործարար կյանքի կենտրոն»: Բայց կայքում, որպես ընկերության հիմնադիր, նշված է Մարետա Գեւորկյանը: Ըստ ամենայնի՝ Վազգեն Գեւորկյանը նրա մերձավոր ազգականն է:

**Ռուզան ՍԱՐԳՍՅԱՆ**

## «Ծովակալ Ուշակովի առեղծվածը». նոր ֆիլմ, որն արժե դիտել

Փետրվարի 3-ին տեղի կունենա «Ծովակալ Ուշակովի առեղծվածը» լիամետրաժ կինոնկարի պրեմիերան: Ցուցադրությունը կկայանա Մոսկվայի Սուրբ Փրկչի մայր տաճարի եկեղեցական ժողովների սրահում: Կինոնկարի ցուցադրությանն իր օրհնությունն է տվել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլը: Նկարահանվել է ՌԴ նախագահի Մշակութային նախաձեռնությունների հիմնադրամի կողմից: Վերջին յոթ տասնամյակում սա առաջին շարժանկարն է՝ նվիրված ռուս անվանի ծովակալին: Ֆիլմը պատկանում է պատմաարկածային ժանրին: Մասնակցել են դերասաններ Յուրի Բելյաեւը, Միխայիլ Բոյարսկին, Ալեքսանդր Լազարեւը, Իվան Տրուշինը, Իրինա Կրյուչկովան, Ստանիսլավ Դուժնիկովը եւ այլք: Նկատենք, որ ռուսական քաղաքական ներկայիս վերնախավում Ուշակովը կարեւոր պատմական ֆիգուր է համարվում: Նրան դիտարկում են որպես տաղանդավոր զորավար, դիվանագետ եւ բարեգործ: Ի դեպ, ծովակալ Ուշակովը սրբադասված է Ռուս ուղղափառ եկեղեցու կողմից, համարվում է Ռուսաստանի ռազմածովային ուժերի եւ Մորդովիայի հովանավոր սուրբը: Վերջին անգամ Ֆյոդոր Ուշակովի մասին կինոնկար նկարահանվել է 1953 թվականին՝ Միխայիլ Ռոմի կողմից: Դա երկմասանի կինոպատում է՝ «Ծովակալ Ուշակով» եւ «Նավերը գրոհում են բաստիոնը» վերնագրերով: Սցենարը գրել է Յուսուպ Ռազիկովը, որը հայտնի է պատմական կինոնկարի դիպուկ եւ վավերական պատմությանը հարազատ կինոսցենարներով: Նրան են պատկանում Պոտյոմկինի եւ Արամ Խաչատրյանի մասին նկարահանված ժապավենների սցենարները:

## ԿԵՆԱՑՆԵՐ ՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ՝ ԼՈՌԻՆ «ԺԱՄԱՌԺԱՄ» ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՐԶ

«Լոռին զարգանում է ժամառժամ». այս հուսադրող միտքը Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանինն է: Դուք գիտեի՞ք այս մասին: Ես՝ չգիտեի: Մինչ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կայքէջում սա կարդալը, որքա՜ն երկար եմ դեգերել անտեղյակության մշուշի մեջ: Բայց ահա՝ աչքերս բացվեցին՝ կարդացի բարի լուրն ու որոշեցի պատմել, որ ձեր աչքերին էլ լույս իջնի:

Պարզվում է՝ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանն այցելել է Շիրակամուտ, որտեղ կառուցվում է կրթահամալիր: Մարզի ղեկավարը հետեւել է շինարարական աշխատանքներին: Մի շինարար անգամ բացել է կարեւոր գաղտնիք՝ այս հիմքերի վրա հնարավոր է 16 հարկանի շենք կառուցել: Գուցե մարզպետը մտքի թռիչքով արդեն տեսել է այդ 16 հարկը, որոնք դարձել են լավատեսության աղբյուր, գուցե մեկ ժամվա շրջայցի ընթացքում կատարված աշխատանքն այնքան ահռելի է թվացել, որ հիմք է տվել աշխարհին ազդարարելու՝ մեր աղքատ մարզը ժամառժամ զարգանում է: Բայց գուցե լավատեսության հիմքում այլ գործե՞ր էլ կան: Փնտրտուքս շարունակեցի մարզպետարանի կայքէջում:

Հաջորդ լուրով հայտնում են, որ Լոռու մարզպետն ուղեկցել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանին՝ Վանաձորի ցերեկային կենտրոնում ծանոթանալու կենտրոնի պայմաններին եւ սննդի որակին: Անհայտ է մնում՝ ի՞նչ տվեց այդ այցը կենտրոնին, ի՞նչ խնդիր լուծվեց, ի՞նչ փուշ հանեցին հանրության մատից, եւ ինչպե՞ս դա ծառայեց մարզի ժամառժամ զարգացմանը: Ավելին իմանալու փորձերն ապարդյուն են՝ նույնիսկ լուրի վերջում նշված «Մանրամասները՝ տեսանյութում» արտահայտությունը պարզապես դատարկ խոսք է. տեսանյութը չկա:

Մյուս լուրը վերաբերում է առողջության համընդհանուր ապահովագրությանը, որը, ըստ պաշտոնական հաղորդագրության, արդեն «մտել է Լոռի»: Առաջին «պտուղները» ներկայացվում են կոնկրետ թվերով՝ 1,5 մլն, 1 մլն 350 հազար եւ 950 հազար դրամ, որոնք պետք է վճարեին Վանաձորի բժշկական կենտրոնի սրտաբանական բաժանմունքի երեք բուժառու, սակայն ապահովագրության շնորհիվ քաղաքացիները վճարել են 0 դրամ: Մարզպետն այցելել է բժշկական կենտրոն, ծանոթացել բուժառուների վիճակին եւ կարեւորել համընդհանուր ապահովագրությունը՝ որպես հասանելի եւ որակյալ բուժօգնություն ապահովող նախաձեռնություն: Հիանալի է, ուրախալի է: Միայն մի ցանկություն՝ ի շահ հետագա բուժառուների. քանի որ հանրապետությունում ապահովագրության համակարգը ծանր քայլերով է ներդրվում, եւ դժգոհությունները համատարած են, թող Լոռիում ամեն ինչ հարթ ընթանա ու դառնա դրական օրինակ մյուսների համար:

Մոտենում ենք ամենակարեւորին. Լոռու մարզպետն այցելել է Սպիտակ, որտեղ փայտաշեն տնակներում ապրող 36 ընտանիքի համար կառուցվում է բազմաբնակարան շենք: Այդ ընտանիքները Սպիտակի երկրաշարժից հետո արդեն 40 տարի սպասում են սեփական բնակարան ունենալուն: Ծրագիրն իրոք կարեւոր սոցիալական նշանակություն ունի երկար տարիներ սպասող ընտանիքների համար, որոնք մեծացել են այս տարիներին, ճյուղավորվել:

Հաջորդ կանգառը բազմաչարչար Ալավերդին է: Գիժ Դեբեդի վարարումների եւ ավերածությունների դառը հիշողությունը պահպանվում է շուրջ երկու տարի: Վերջապես հերթական ընտանիքի բնակարանային խնդիրը լուծվել է՝ 5 մլն 688 հազար դրամ փոխհատուցմամբ: Ջրհեղեղից վնասված շենքը դարձել է վթարային եւ ենթակա է քանդման: Փոխհատուցման փաստաթղթերը հանձնել է անձամբ մարզպետ Արեն Մկրտչյանը եւ նշել. «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած կառավարության օրոք աղետի էպիկենտրոնում հայտնված ընտանիքները ստիպված չեն անտուն սպասել 40 տարի»: Բնական է՝ ընտրություններ են մոտենում, եւ նման տեքստեր մենք դեռ շատ ենք լսելու: Թափանցիկ ակնարկներ ու հիշեցումներ, քննադատություն նախկին իշխանությունների հասցեին: «Սպիտակում 36 ընտանիք 40 տարի տառապում է, իսկ մենք 2 տարում տուն ենք տալիս» ենթատեքստով: Իհարկե, այդ քննադատության մեջ նաեւ ճշմարտություն կա՝ արդար լինենք: Բայց ճշմարիտ չէ՞ր լինի հիշել նաեւ, որ այդ 40 տարիներից 8-ն արդեն ՔՊ-ի իշխանության տարիներն են: Ինչո՞ւ գործընթացը տեղից չի շարժվում, հնարավոր չէ՞ր արագացնել ջրհեղեղից տուժած ընտանիքներին բնակարանով ապահովելը, եւ որքանո՞վ է այժմ մեկ ընտանիքին բնակարան տալը տեղավորվում «հրատապ օգնության» տրամաբանության մեջ:



Փառավոր լուրեր եւս կան: Սկսվել է ձմեռային զորակոչը, անցկացվում են նորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության ճանապարհելու հանդիսավոր արարողություններ: Դրանց մասնակցում է նաեւ Լոռու մարզպետը: Մի տեղ նա խոստացել է. «Մեկուկես տարի հետո ձեր կենացը կբարձրացվի: Կենացից զատ՝ խոստանում եմ առանց կանգ առնելու աշխատել ձեր ու ձեր ընտանիքների համար՝ մեր երազանքի Հայաստանի կերտման գործը մտքում պահած»:

Եվ, իհարկե, ամենափառավոր լուրը. «Վանաձորցի Մարիամ Ստեփանյանը համալրել է Հայոց բանակի շարքերը: Նա մարտական սամբոյի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր է, բազմաթիվ միջազգային մրցաշարերի հաղթող: Կծառայի կանանց գումարտակում եւ ծառայության ավարտին կստանա 1 միլիոն դրամ պատվովճար (մանրամասները՝ տեսանյութում)»: Չարչարվել չարժե՝ տեսանյութը չկա: Միանում ենք մարզպետին ու մաղթում ենք. «Բարի վերադարձ, սիրելի զինվորներ: Թող ձեր ծառայությունը լինի օրինակելի ու խաղաղ»:

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

## ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏՈՒՐՆԵԻ ՈՐՈՇ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՆՅՈՒԱՆՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն օրեր առաջ հայտարարեց, որ փոխնախագահ Ջեյ Դի Վենսն առաջիկայում կայցելի Հարավային Կովկաս՝ Հայաստան եւ Ադրբեջան: Այցն ինքնին հետաքրքիր է, որովհետեւ ամերիկյան հանրապետական վարչակազմերի պատմության մեջ սա թերեւս կարելի է դիտարկել որպես եզակի նախադեպ: Սակայն կարեւոր է նաեւ այն, որ փոխնախագահ Վենսի ռեգիոնալ տուրնեում Վրաստանը ներառված չէ: Ու սա արդեն առիթ է տվել բազմաթիվ ու տարատեսակ քննարկումների ծավալման, ինչպես, օրինակ, արդյո՞ք ամերիկյան վարչակազմը ռեգիոնում իր առաջնահերթությունների մասով խմբագրումներ է մտցնում, եւ Վրաստանը դուրս է մղվում՝ իր տեղը զիջելով հարեւաններին:

Ինչպես գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը, Միացյալ Նահանգների համար Հարավային Կովկասը, իհարկե, թիվ մեկ կարեւորության ռեգիոնը չէ: Ճիշտ է՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի վերնախավերը փորձում են ընդգծել ռեգիոնի կարեւորությունն ու եզակիությունը, սակայն դա միայն իրենց՝ միջազգային քաղաքականության մեջ ներգրավվածությունն ապահովելու համար է: Իրականում, սակայն, Հարավային Կովկասը Միացյալ Նահանգների կողմից դիտարկվում է որպես շատ ավելի մեծ ծավալի նախագծերի մաս: Այն դիտարկվում է ընդամենը որպես Մերձավոր Արեւելքին եւ Կենտրոնական Ասիային «հարեւան», ռեգիոն, որտեղ ամերիկյան հետաքրքրություններն ու շահերն առավել նկատելի են: Բացի այդ, Կովկասը նաեւ յուրահատուկ տուրբուլենտությամբ տարածք է, որտեղ կարող են ի հայտ գալ այնպիսի կոնֆիգուրացիաներ, որոնք իդեալական աշխարհակարգի եւ ռեգիոնալ համակարգի մասին ամերիկյան պատկերացումներին այնքան էլ չեն համապատասխանում:

Այս համատեքստում փոխնախագահ Վենսը ռեգիոնալ իր տուրնեի ընթացքում իրականացնելու է յուրատեսակ «ֆակտ-չեքինգ»՝ փաստերի ստուգում: Անցյալ տարի՝ օգոստոսին, Վաշինգտոնի միջնորդությամբ Բաքուն եւ Երեւանը քայլեր են արել երկարամյա հակամարտության դադարեցման ուղղությամբ: Այս առումով, ամերիկյան կողմի համար կարեւոր է հասկանալ, թե որքանով է իրատեսական կամ իրական դա, եւ որտեղ է, որ իրական գետնի վրա եղած իրականությունն ու քարոզչական իրականությունը չեն համապատասխանում միմյանց: Բացի այդ, կարեւոր է նաեւ Թրամփի ուղու նախագծի խթանումն այս այցով: Այս ամենի ընդհանուր համապատկերը եթե կազմենք, ապա կերեւա, որ ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի միջեւ Հարավային Կովկասի մասով կա որոշակի աշխատանքի բաժանում: ԵՄ-ն փորձում է առավել կենտրոնանալ Հայաստանում տեղի ունենալիք առաջիկա ընտրությունների վրա, մինչդեռ ԱՄՆ-ի համար կարեւոր են անվտանգային եւ ենթակառուցվածքային հարցերը: Այստեղ հետաքրքիր է նաեւ Վրաստանի վիճակը: Թբիլիսիից հնչած հայտարարություններից կարելի է հասկանալ, որ Վրաստանն ինքն է ուզում խոսել իր մասին՝ այս նոր ձեւավորվելիք ճարտարապետության մեջ: Վաշինգտոնի բռնած դիրքը կարող է վկայել այն մասին, որ Միացյալ Նահանգները չի վստահում վրացական իշխող քաղաքական ուժին, քանի որ վերջինս ունի արեւմտյան վեկտորից այլ մոտեցում: Եվ, բացի այդ, կարելի է հասկանալ, որ Վենսն այլ առաջադրանքներ էլ ունի, եւ Վրաստանն այս դեպքում այդ առաջադրանքներում տեղ չունի:



**Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Աշխարհը կանգնած է նոր համաշխարհային պատերազմի շեմին: Գուցե այդ պատերազմն արդեն ընթանում է՝ առանց պաշտոնական հայտարարության: Խելագարված աշխարհի տարբեր ծագերում պատերազմները հերթով բռնկվում են, մարում, ապա նորից բորբոքվում՝ ռուս-ուկրաինական, արաբա-իսրայելական, հնդկա-պակիստանյան… Կարճատեւ, բայց աղմկոտ ռմբակոծումներ, մշտական լարվածություն: Աշխարհը կարծես խելագարվել է: Կանգ առնելու կոչերը չեն լսվում կամ խլանում են զենքերի աղմուկի մեջ: Միջազգային կառույցները կորցնում են իրենց ազդեցությունը, աշխարհակարգը ճաք է տալիս: «Խաղաղության խորհուրդ» անունով արհեստածին կազմակերպություն է ստեղծվում, մինչդեռ պատերազմները շարունակվում են:

Մեծերը վերաձեւում են աշխարհը, ժողովուրդները՝ տառապում, տնտեսությունները՝ կործանվում:

Հայ ժողովուրդն էլ դիտորդի դերում չէ: Աշխարհում տեղի ունեցող յուրաքանչյուր պատերազմ առաջին հերթին անդրադարձել է մեզ վրա: Մեզ համար պատերազմը տեսական հասկացություն չէ, այլ ապրած պատմություն՝ ցեղասպանություն, հայրենազրկում, կոտորածներ, կիսված հայրենիք, Արցախ: Աշխարհն օր-օրի նոր, վտանգավոր փուլ է մտնում՝ համաշխարհային քաոսի փուլ: Պատերազմները մե՛կ մարում են, մե՛կ նոր ուժգնությամբ բռնկվում, առանց հստակ սահմանների: Աշխարհը կարծես կորցրել է ինքնապահպանման բնազդը: Իսկ փոքր ազգերի համար ամենամեծ վտանգը ոչ միայն պատերազմն է, այլեւ սխալ կողմնորոշումը: Միջազգային կառույցները քայքայվում են: ՄԱԿ-ը թուլացել է, եվրոպական միասնականությունը ճաք է տալիս, առաջ են մղվում արկածախնդիր, անհասկանալի նախաձեռնություններ: Այդ ֆոնին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հանդես է գալիս «խաղաղություն» անունով ծրագրերով, որոնք ոչ միայն խաղաղություն չեն բերում, այլեւ խորացնում են քաոսը: Գրենլանդիա, Կանադա, Պանամայի ջրանցք, Վենեսուելայի հարստություններ… ցանկությունների անվերջ ցանկ՝ կայսրական մոլուցքով:

Եվ ահա՝ այս խելագարության մեջ Հայաստանը ոչնչով չարդարացված, մինչեւ վերջ չհստակեցված նպատակներով, փորձում է հայտնվել Թրամփի գրկում՝ դառնալ նրա Խաղաղության խորհրդի անդամ: Խորհուրդ, որի անդամ 200 պետություններից մոտ 20-ն են երկրորդական, կախյալ, ավտորիտար ռեժիմներով կառավարվող երկրներ: Սա ոչ թե դիվանագիտություն է, այլ՝ քաղաքակրթական շեղում, շփոթ: Սա եվրոպական արժեքներից փաստացի հրաժարում է՝ այն նույն Եվրոպայից, որը, որքան էլ թերի ու երկիմաստ, այնուամենայնիվ, կառուցված է իրավունքի, հավասարակշռության, կայուն զարգացող ժողովրդավարական սկզբունքների ու մտածողության վրա: Եվ Եվրոպան չի ընդունում Թրամփի ձեռնածությունները՝ լավ հասկանալով դրանց կարճ կյանքն ու վտանգավոր հետեւանքները:

Մենք ինչի՞ ենք ձգտում: Ի՞նչ ենք շահելու՝ կանգնելով մեկի կողքին, որի ծրագրերն այսօր կան, վաղը չկան: Ինչպե՞ս ենք ապահովելու մեր երկրի անվտանգությունը՝ «փակուղում հայտնված» մի խումբ պետությունների շարքում:

Աշխարհը պատերազմի թոհուբոհի մեջ է: Բայց հայ ժողովուրդը միշտ առաջինն է զգացել մեծերի խաղերի հետեւանքները՝ ցեղասպանությամբ, հայրենազրկմամբ, պետականության կորստով: Այսօր էլ այդ օրենքը չի փոխվել: Ռուս-ուկրաինական պատերազմն այս քաոսի միայն մի դրսեւորումն է: Առանցքն այն է, որ աշխարհում ուժի լեզուն կրկին դառնում է որոշիչ: Եվ Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ թեթեւամտություն, կողմնորոշման խառնաշփոթ, կարճաժամկետ քաղաքական շահարկումներ: Մենք դրա հետեւանքները տեսանք Արցախում: Դա պիտի դաս լիներ: Բայց արդյո՞ք դարձավ:

Այսօր Հայաստանի գլխավոր վտանգը ոչ միայն արտաքին ճնշումն է, այլեւ ներքին անլրջությունը, երբ երկրի ղեկավարը պատերազմի ու գոյության այս կռվում ոչ թե բանակն է ուժեղացնում, անվտանգության համակարգը վերակառուցում, փորձառու ու իմաստուն մարդկանց լսում, այլ անիմաստ ու պիղծ պատերազմ է սկսում Եկեղեցու դեմ: Պատերազմը դռան առաջ է, իսկ նա մեր խորհրդանիշների դեմ է կռվում:

Աշխարհը վերաձեւվում է, իսկ մենք թմբուկ ենք զարկում: Ինչո՞ւ պետական որոշումները չեն ծնվում խորքային վերլուծությունից, այլ՝ պահի տրամադրությունից:

Պատերազմները ոչ մի ժողովրդի օգուտ չեն բերել: Առավել եւս՝ փոքր, խոցելի, թշնամիներով շրջապատված ազգերին: Հայ ժողովրդի համար խաղաղությունը ոչ թե կարգախոս է, այլ՝ գոյության պայման, բայց խաղաղությունը չի կառուցվում խաբուսիկ դաշինքներով, «կարճաշունչ» առաջնորդների ծրագրերով, աշխարհաքաղաքական արկածախնդրությամբ: Այո, Հայաստանը կանգնած է ճակատագրական ընտրության առաջ: Դա ընտրություն է ոչ թե Արեւմուտքի կամ Արեւելքի, այլ՝ խելքի եւ անմտության, իմաստնության եւ մոլուցքի, պետականության եւ ինքնախաբեության միջեւ: Այսօրվա աշխարհում հայերիս ամենից առաջ հարկավոր են Խելք, Բանականություն, Պատասխանատվություն, Միասնականություն:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 31.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Նիկոլ Փաշինյանը եւ Ռոբերտ Քոչարյանը գործում են սինխրոն. խոսքը միայն զուգահեռ ասուլիսների մասին չէ, որոնք տեղի են ունենում նույն օրը՝ հասարակությանը ներշնչելու, որ քաղաքական պայքարն այս երկու տիտանների միջեւ է, երկու անհաշտ եւ թշնամի հակառակորդների: Նրանք գործում են սինխրոն, որովհետեւ ունեն ընդհանուր հակառակորդ եւ ընդհանուր շահ: Երկուսն էլ դեմ չէին լինի, որ հունիսին 7-ին կայանալիք ընտրություններում վերարտադրվեր 2021 թ. խորհրդարանական ընտրությունների պատկերը. ՔՊ-ն՝ իշխանություն, «Հայաստան» դաշինքը՝ հիմնական ընդդիմություն: Անցած 5 տարիների ընթացքում «Հայաստան» դաշինքն առանձնապես խնդիր չստեղծեց Փաշինյանի իշխանության համար, Փաշինյանը դեմ չէր լինի, որ եւս մի 5 տարի նրանք այդ դերը կատարեին: Նույնը կարելի է ասել «Հայաստան» դաշինքի համար. ավելի լավ է աշխատել որպես ՔՊ-ին հիմնական ընդդիմություն, քան ընդհանրապես լինել գործազուրկ: Բայց նրանց՝ երկուսին էլ խանգարում է նոր ի հայտ եկած հանգամանք՝ «Մեր ձեւով» շարժումը, Սամվել Կարապետյանը, երկուսի կռիվն էլ նրա դեմ է, ամեն մեկինը՝ յուրովի:

Նիկոլ Փաշինյանը կռիվ է տալիս նախկինների եւ անցյալի վերադարձի դեմ. Քոչարյանը նախկինների ամենակարկառուն ներկայացուցիչն է, որն իշխանության վերադառնալու հայտ է ներկայացնում: Քոչարյանն ասում է, որ հենց ինքն է գլխավորելու իրենց նախընտրական ցուցակը, իհարկե, մի փոքր սեթեւեթում է՝ եթե ավելի արժանավոր թեկնածու չգտնեն, բայց դե պարզ է, որ իրենից արժանի աշխարհի երեսին գոյություն չունի, ուր մնաց՝ Հայաստանում: Փաշինյանի համար Քոչարյանն իդեալական սպարինգ պարտնյոր է. անարդար, կոռումպացված, կլանային, բռնության ու ապօրինությունների մասին հիշողություններով հագեցած անցյալի սիմվոլ, եւ ինքն էլ իբրեւ թե պայքարում է այդ անցյալի վերադարձը թույլ չտալու համար:

Քոչարյանի համար էլ Փաշինյանն է հարմար հակառակորդ. նա երկիրը տարել է պարտության եւ կապիտուլյացիայի, խոստացել է բարելավել մարդկանց կյանքը, երկիրը տանել զարգացման եւ բարգավաճման, բայց նրա գործունեության արդյունքը Արցախի կորուստն է, Հայաստանի պարտությունները եւ տարածքային կորուստները, անարդար կառավարումը, հովանավորչությունը, կոռուպցիան, ներհասարակական թշնամանքը, զարգացման եւ ապագայի հեռանկարի բացակայությունը: Քոչարյանն իր ասուլիսի ժամանակ ասում է, որ ինքը Փաշինյանի էլեկտորատից ձայն չի տանելու, ասում է՝ նույնիսկ մի մարդ չի կարող իր կողմը տանել, դրանով չի էլ զբաղվելու. նրա հիմնական թիրախն ընդդիմադիր ընտրազանգվածն է, նրանց քվեները: Փաշինյանի ուզածը հենց դա է, նա ողջունելու է բոլոր նրանց, ովքեր պատրաստ են կիսել այդ ընտրազանգվածը: Քոչարյանն իր ասուլիսի ժամանակ հայտարարում է՝ ես համարում եմ, որ ինձնից լավ այս վիճակից ոչ ոք չի կարող երկիրը հանել: Իհարկե, այս ակնարկն ուղղված չէ Փաշինյանին. քանի որ հենց նա է երկիրը գցել այս վիճակի մեջ, հետեւաբար ո՞ւմ է ուղղված այս հայտարարությունը, իհարկե՝ Սամվել Կարապետյանին, որը եւս հայտարարում է, որ կարող է երկիրը դուրս բերել այս վիճակից:

Կարող են ասել, որ յուրաքանչյուր քաղաքական գործիչ, այդ թվում եւ Ռոբերտ Քոչարյանը, իրավունք ունի ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացնել, եւ հասարակությունը, ընտրողն ինքը պետք է որոշի, թե ով կլինի իշխանություն, ով՝ ընդդիմություն, ում է վստահում երկիրն այս վիճակից հանելու գործը կամ ընդհանրապես համարում է, որ երկիրը պետք է թողնել այս վիճակում: Այս ամենը, իհարկե, տեսության մեջ ճիշտ է, բայց գործնականում Ռոբերտ Քոչարյանը ցույց է տվել, որ ի վիճակի չէ հաղթելու Նիկոլ Փաշինյանին, հեռացնելու նրան իշխանությունից, հինգ տարի առաջ նրա մեկնարկային տվյալներն ավելի բարձր էին, որքան էլ նա հակառակը պնդի: Դրա մասին գիտի նաեւ Նիկոլ Փաշինյանը, եւ դրանից էլ տպավորություն է, թե նրանք՝ երկուսն էլ, հասկանալով դա, փորձում են օգնել իրար, որ յուրաքանչյուրը պահպանի իր դիրքերը, եւ առկա ստատուս քվոն փոփոխության չենթարկվի:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am